

## Ընտրութիւններ

# ԱԶԳԱՅԻՆ ՍԱՐՍԻՆՆԵՐԸ ԵՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

### Շ. Յովհաննիսինան

1986 թ. մայիսի 16-ին, 11-րդ Պատգամատրական Ժողովի ընտրութիւնը իրայատուկ պայմաններում տեղի ունեցաւ, որը որպէս պատմական մի իրադարձութիւն ուսումնասիրութեան կարիք ունի:

Այս ժամանակահատօնում 14 տարի շարունակարար Պատգամատրական Ժողովը, արդէն հարիրից աւել նիստեր է ունեցել, մշակել եւ առաջարկել է կանոնագրութիւն, ծրագրեր է ընտրել, որոշումներ է կայացրել՝ Թեմական Խորհուրդ, հաշվեքնիչ մարմին եւ 25-ի հասնող մարմիններ է ընտրել եւ վերջապէս 34 անդամ 54 հոգուց մնացած՝ Առաջնորդ է ընտրել (05.06.-2000թ.): Այս ընթացքում Ազգային Ժողովի անդամներն են ընտրութիւն, որոնք 1995-ին Կարողիկոս են ընտրութիւն Արքու Ս. Վեհափառին, Ազգային կենտրոնական վարչութեանն եւ այլն:

1959-61 թթ. իրանահայ երեք թեմները Մայր Արքու Ս. Էջմիածնի գրկից անջատելով, Կիլիկիոյ Կարողիկոսութեան կցւեցին, որը 1953 թ. Իրանի պետական յեղաջրջնան, սաոր պատերազմի պատճառով տագնապի մատնեց սփիտքին՝ այդ թում նաև իրանահայութեան:

Այդական 50 տարի համայնքի ազգային-կրօնական, մշակութային եւ հասարակական հարցերը լուծելու հանար, իմբը են դրութիւն դպրոց, եկեղեցի, միութիւն, Առաջնորդարան եւ այլն, եւ սոյն հաստատութիւնները դեկավարեն համար ընտրութիւն են մարմինները, որոնք ինչ-որ չափով նեղմիտ-մենատեր, իրատես-տրամարանող եւ ազգային-դեմոկրատ ուղղութիւններ են որդեգրել:

Այս ուղղութիւնը եւ ազգային մարմինների ծրագրերը եւ գործունեութիւնը տագնապի է մատնում համայնքին, որը երեք փուլերից է անցել 1940-1965 թթ., 1965-1979, 1979-2000 թթ.:

1995 թականից համայնքի մէջ իրատես-տրամարանը եւ ազգային-դեմոկրատ ուղղութիւնը կարողանում է յաջողութիւններ ձեռք թրել, որոնց հետեւանքը աշխոյժ ընտրութիւններ էին՝ 5-րդ եւ 6-րդ խորհրդարանի ներկայացուցիչների ընտրութիւնները, հայոց դպրոցների ծնողական խորհրդանտերի տարեկան ընտրութիւնները, նաև Պատգամատրական Ժողովի եւ Թեմական Խորհրդի, հաշվեքնիչ մարմինի եւ 25 մարմինների ընտրութիւնը:

Այս ազգային մարմինները ծրագրի են առաջարկում համայնքին յուղող հարցեր շորջ, խորհրդակցում են տարբեր տեսակետների տէր անհատների եւ շրջանակների հետ եւ որոշ չափով գեկոյց եւ հաշվեքնութիւններ:

Այդպիսով յոյն է ներշնչում, որ տագնապը յաջող անցումնային շրջան թեալկոհոլու հանար կարելի է համախնական ծներ կիրառել, սակայն Ազգային մամինների սոյն տքնաջան աշխատանքը մի քանի բնագասաւաններում դեռևս իր արդինքին չի հասել եւ տասնեակ տարիների ընթացքում գոյացած տագնապը այս ժամանակահատօնում ներկայ գործեղանակով դեռևս չի կերպացնել:

Սակայն որո՞նք են դեռևս չլուծած հարցերը.

Ա- Թեմի կանոնագրութեան մշակումը, հաստատումը եւ վաերացումը:

Բ-12-րդ Պատգամատրական Ժողովի ընտրութիւնը՝ աշատ, անկաշկան եւ արդար պայմաններում կատարենլ:

Գ- Կրթական հարցի լուծումը կրթական մակարդակի բարձրացումը:

Դ- Կրօնական հարցի լուծումը, կրօնական դաստիարակութիւնը, Հայոց Առաքելական Եկեղեցու միութիւնը, իրանահայ 3 թեմների վերադարձը Մայր Արքու Ս. Էջմիածնի գիրկը:

Ե- Համայնքի հասարակական հարցերը՝ իրաւական-դաստիարական, ժառանգական, արմեգին:

Զ- Հայաստան-սփիտը կապերի ամրապնդում, երկրաշարժի օգնութեան եւ Հայաստան հիմնադրամին օժանդակել, կրատորական մօտեցման վերացումը:

Է- Պետական օրենսդիր, գործադիր եւ դատական մարմինների հետ խորհրդակցել եւ հետեւել վերոյիշեալ հարցերի համար տրամարանական լուծում գտնել:

Ը- Տասնեակ տարինների աշխատանքի գրաւոր եւ բանաւոր գեկոյց եւ հաշվետութիւն ներկայացնել:

Թ- Տարբեր տեսակետների տէր անհատների եւ շրջանակների հետ խորհրդակցել եւ նրանց առաջարկները պատշաճ ժամանակի ընթացքում գործնականի վերածել:

Ժ- Փորձառու, մասնագետ, բանիմաց եւ եռանդուն անդամներ ընդգրկել ազգային մարմինների մէջ:

Նման հարցերի անլուծելի մնալը պատճառ է դարձել 50 տարուայ ընթացքում տագնապի գոյանալուն, որին ժառանգել են համայնքը եւ ազգային մարմինները:

Սակայն վերջին 20 տարինների ընթացքում համայնքին ազգային-հասարակական հարցերի համար ընդհանուր, յստակ եւ գործնական ծրագիր չի ներկայացնել, որպէսզի համայնքի տարբեր տեսակետների տէր անհատների, շրջանակների եւ հասարակութեան կողմից ընդունի:

Համախնական նման մի մօտեցման անհրաժշտութիւնը նկատելի է եւ այն տարբեր բնագասաւաններում տեղի է ունեցում տագնապի յաջող անցումային շրջան թեակոխելու համար: Աւելի բարդ ներքոյիշեալ հարցերի շրջան ակտու է խորհրդակցութիւն եւ միասնականութիւն:

ա- Ընտրութիւնների աշխոյժ կատարում:

բ- Համայնքի ազգային, կրօնական, կրթական, մշակութային եւ հասարակական հարցեր:

գ- 1915 թ. ապրիլի 24-ի ճանաշնան գործընթաց, Հայաստան-սփիտը կապերի ամրապնդում:

դ- Թեմի կանոնագրութեան մշակում, հաստատում եւ վաերացում:

է- Հայոց դպրոցների կրթական հարց:

Այս հարցերը ազգային մարմինների, մանուկի եւ հասարակութեան համար յուղող հարցեր լինելով քննարկում են եւ տարբեր տեսակետներ կան այդ առքի: Այսպիսով ընդհանուր ծրագիրը կազմելու դէաքում կը նկատի, որ այս տեսակետները հակառակ չեն միմեանց, այլ լրացնում են իրար:

Տագնապը համայնքի մէջ գոյացել է մեզանից անկախ մի քանի պատճառներով, սակայն այն որ համայնքին է վերաբերում կարելի է բարեկել հետեւեալ կերպով:

ա- Համայնքի խորհրդարանական ներկայացուցիչները, ՊԺ-ի անդամները, դպրոցների ԾԽ-ի անդամները, միութիւնների վարչութիւնների անդամները, որոնք հա-

## Ընտրութիւններ

մայնքի ազգային մարմիններն են, համայնքի յուղող հարցերի համար ծրագիր կամ չեն առաջարկել, կամ առաջարկելու դէաբում չեն գործադրել:

թ- Տարբեր տեսակէտների տէր անհատների եւ շրջանակների ըննադատութիւններն ու առաջարկութիւնները, որպէս հակադրութիւն համարելը եւ նրանց ընթացք չտալ:

գ- Առաջարկած ծրագրերին լրջօրէն չիտեսելու:

դ- Համայնքի տարբեր խաւերի, տեսակէտների տէր անհատների ազգային-հասարակական ծրագրերի եւ կը շիտի տեղաշարժի և փոփոխութիւնները, որոնք ընտրութեան միջոցով չեն ներառել ազգային մարմինների մէջ:

Այդախով համայնքի հարիրաւոր ազգային մարմինների անդամների մէջ ձեւադրել է տարբեր ուղղութիւն եւ մօտեցում, որոնց հիմնականում ներմիտ-մենատէր, իրատես-տրամարանող եւ ազգային-դեմոկրատ կարելի է համարել:

Սակայն հիմնականում ազգային մարմինները անցեալ 50 տարիների մասնաւանդ վերջին 20 տարιայ երկրի պայմանների փոփոխութիւնների ընթացքում, ի՞նչ մօտեցումներ են ունեցել եւ համայնքին յուղող ի՞նչ հարցեր են օրակարգ դարձել եւ ընտրութիւնները ի՞նչ դեր են ունեցել:

1. Ազգային- Հայ Դատի յետապահման հարցը , Հայաստան-Իրանահայ յարաբերութիւնները լոգունագիտին է եղել :

2.Կրօնական- Անջատել Ս.Էջմիածին Մայր Աթոռի գրեից, որը երկրի պայմանների հակականունական, ապօքինի եւ հայ ժողովրդի հոգեւոր քարոյական միասնութիւնը քանդող թելադրանքն էր:

Այս 50 տարিযա մէջ վճառել է Հայ Եկեղեցու միութիւնը, հասարակութեան կրօնական-կրթական դաստիարակութիւնը այն:

3. Կրթական- Թէել համայնքի անդամները, բարերարները դպրոցներ են հիմնել, սակայն ներմիտ-մենատէր անհատներ փորձել են այն իրենց ձեռքում պահելով որպէս լծակ օգտագործել անհատական-խմբային նախատելի համար՝ յատու ուշադրութիւն շրարձնելով կրթական մակարդակին:

4. Մշակութային- Ազգային մարմինները այս հարցը բոլել են միութիւնների հայեցորդութեանը եւ որեւէ լուրջ ուղղութիւն այս առքի չեն ընդունել:

5. Հասարակական- Համայնքի դատական, իրաւական եւ հասարակական հարցերը մնում են չլուծած:

Այս հարցերի լուծանակ համար ծրագրերմ ու գործունութիւնը քոյլ լինելու մի քանի պատճառներ կամ նախայն, որ տասնակ տարիներ ազգային մարմինները ընտրութիւնների միջոցով բարեփոխութեան չեն ենթարկում, որպէսզի փորձառու մասնագիտներ, եռանդու անդամներ ընտրեն Պատգամատրական Ժողովը Վերոյիշեալ հարցերի ըննարկելու համար: Հասարակութեան չեն տրըրում կանոնաւոր հաշետութիւններ: Հասարակական հարցադրութիւններին լուրջ պատասխան չի տրում:

Իրանահայ համայնքում ազգային մարմինների ընտրութիւնները եւ գործունեութիւնը ազդել է երկրի համայնքի պայմաններից՝ սկսած 1940-1965, 1965-1979, 1979-1995 թթ. եւ այնուհետեւ ազգային-հասարակական գործիչներն ու շրջանակները մասնակցելով այս հարցերին իրենց ուղղութիւններով եւ մօտեցումներով ազդել են

մարմինների գործունեութեանն ու նրանց ծրագրերի վրայ: Գյոյացել են տագնապներ, հասարակութեան տեղաշարժի նաև տարբեր ուղղութիւն որդեգրած անդամների պատճառով:

Տագնապը գյոյացել է ազգային, կրօնական, կրթական, մշակութային եւ հասարակական հարցերի շորջ սխալ մօտեցումներ, ծրագրեր եւ աշխատանքներ կիրառելուց, տարբեր տեսակէտների տէր անդամների միմնաց հակադրման եւ ոչ դեմոկրատիկ ընտրութիւնների, նաև ընտրութիւն տեղի չունենալու հետեւնանըով:

Այդախով երևան են եկել ազգային մարմինների մէջ նեղմտ-մենատէր, իրատես-տրամարանող եւ ազգային-դեմոկրատ անհատներ:

Ազգային մարմինների մէջ աշխատող վերոյիշեալ մօտեցումներ ունեցող անհատները համայնքի առաջնապի գյոյացման եւ այն յաջող անցումային փուլ թեակրիսներու մէջ դերակատար են: Դեմոկրատիկ ընտրութիւնները, համամասնական եւ համախնական ծեր կիրառելը, ազգային-հասարակական հարցերի շորջ ծրագիր առաջարկելը, լնտրութիւններին աշխայժ մասնակցութիւն ունենալը, նաև ներկայ ազգային մարմինների հետ աշխատելը եւ թեմի կանոնագրութեան մշակման աշխատանքին մասնակցելը նպաստելու են տագնապը անցումային շրջանում վերացնելուն:

Այս հարցի մէջ դերակատար են նաև մամուլը եւ հանդիպումները, որոնք ազդելու են հանրային կարծիքի վրա:

Տեղեկատութիւնն, քննադատութիւնն եւ առաջարկութիւն ազգային մարմինների մօտ քիչ են տեղի ունենում:

Ազգային մարմինների անդամները եւ տարբեր տեսակէտների տէր անհատները անցեալ 50-ամեակում ծրագրեր են առաջարկել եւ գործունեութիւն ծավալել:

Ներկայ պայմանների ներքոյ անհրաժեշտ է, որ համայնքը բարեփոխութիւն կրի, որը ազդելու է ազգային կառոյցների վրայ եւ այն տեղի է ունենալու ազգային մարմինների ընտրութիւնների միջոցով, որտեղ թեմնածուները իրենց ծրագրերն են առաջարկում:

Այդախով 1995 թականից երկրի պայմանները առիք ստեղծեցին, որ տագնապը յաջող անցումային շրջան թեակրիսներու համար համայնքի իրատես-տրամարանող, ազգային-դեմոկրատ անհատները եւ շրացնակները հակադրման միջոցով փոխարէն՝ հնարաւորութիւն ստեղծեցին, որպէսզի ընտրութիւնների եւ միասնականութեան միջոցով կարելի լինի համայնքի յուղող հարցերի համար լուծում գտնել:

Ի.Բ.Հ.Խորհրդարանական ընտրութիւնները, Արաք, Ապագայ եւ Լոյս թերթերի հրատարակելը, տարբեր տեսակէտների տէր անհատների եւ շրացնակների արտայատութիւնները եւ աշխատանքը ազգային մարմինների մէջ, կրթական հարցի համար համեմատական լուծումը 5 կետանոց շրջաբերականի հրապարակումով, թեմի կանոնագրութեան մշակումը, 12-րդ Պատգամատրական ժողովի ընտրութեան ժամկէտի ճշտումը, Հայաստան-Սփիտք համահայկական խորհրդաժողովը, Ապրիլի 24-ի ոգեկոչումը հաստատում են տարբեր տեսակէտների տէր անհատների խորհրդակցութեան եւ համաձայնութեան անհրաժշտութիւնը:

Ճար. տեսնել՝ Էջ 17-ում

## ԷԱԾՈՒՅԹ

### ԱՆՑ ՎՅՆ ՍԴՅ ՄՅՆ ԱՐԴՅՈՒՆ

**Պատգամատրական ժողովի դիւնեմը չներկայացաւ.**- Սոյն բականի սեպտեմբերի 5-ին Սաջոկի քաղամասի «Սոլոքերեան» պահում տեղի ունեցած ժողովորական հաւաքալաված 12-րդ ՊԺ-ի ընտրութիւններին: Հաւաքին ներկայ էրն ԸԿՅ-ի ներկայացուցիչները, Թ.Թ.Խ-ի նախագահ պրն.՝ Ռուբիկ Կարապետեանը և նոյն քաղամասի ներկայանձնախմբի ներկայացուցիչները: Ակրոպում որոշ տեղեկութիւններ փոխանցցւեց ԸԿՅ-ի և ԹԽ-ի ներկայացուցիչներով:

Այսուհետեւ օրակարգի նիր դարձան ենտեւեալ հարցերը:

Նախ հարց եղաւ հայոց դպրոցներում հայ տեսուչներ նշանակելու կապակցութեամբ: Տեղեկացւեց, որ մինչ այժմ միայն մի հայ տեսուչ է նշանակել՝ «Շոստոն» դպրոցի համար, իսկ «Ծովմասեան» դպրոցի համար նաև նշանակել է մի հայ տեսուչ, բայց դեռ նրա մանդատը չի յանձնել: Գոյութիւն ունի մի դժարութիւն, այս որ տեսուչ նշանակելու պայմաններից մնկը նրա պետական պաշտօնական ուսուցիչ լինելու հանգամանքն է: Եւ դա հարցը բարդացնում է, քանի որ, անցեալ 20 տարիների ընթացքում ոչ մի նոր հայ ուսուցիչ պետականօրէն չի վարձել, իսկ դրանից առաջ եղածներից շատերը արդէն բռչակի են անցել: Հիմա աշխատանք է տարում, այդ պայմանը վերացնելու համար:

Հարց եղաւ, թէ ինչո՞ւ Ամենայն Հայոց Կարողիկոս՝ Գարեգին Վեհափառի նկարը պազային սրահներում չի փակցւում: Այս հարցին պրն. Ռ. Կարապետեանը պատասխանեց, Եկեղեցներում պատարագի ժամանակ առաջին անոնը, որ հշում է Ամենայն Հայոց Կարողիկոսի անոնն է, ներ ազգային սրահներում մեր Ամենայն Հայոց Կարողիկոսի նկարը փակցւած է, իսկ այս սրահում (Սոլոքեան) ես չեմ տեսել այդ նկարը, բայց որուէ պատճառ չունի:

Այսուհետեւ արծարծեց՝ երիտասարդների քափառիկութեան, պարապութեան և նշակութային միութիւնների անբարար աշխատանքների հարցերը: Պրն. Կարապետեանը վերոյիշեալ հարցերի կապակցութեամբ ասաց, - Այս հարցերը շատ կարեւոր հարցեր են, սակայն

ազգային մարմինները այդ հարցերով չեն զբաղել, և մինչեւ ժողովրդի մասնակցութիւնը չինի, այդ հարցերը չեն լուծվի:

Արտագաղիքի վերաբերեալ պրն. Ռ. Կարապետեանը նշեց, որ ինչպէս Գերազնորի Սրբազն Տէր Սեպոն Եալս: Սարգսեանն է ասել, ժողովրդի և Խորայէլը ծրագրել են հայարափ անել շրջանը և դժբախտարար մեր ժողովրդի մի մասն է հաւատալով նրանց խարութիւններին բողնում է իր ծննդավայրը:

**Աւրունեց 33-րդ համահայկական լիազերը.**- Սոյն բականի սեպտեմբերի 16-ին ժուհիանի «Արարատ» մարզաւանում աւարտւեց 33-րդ համահայկական խաղերը:

Ունաճ առաջարկում էին մի տրամաբանական տեսակէտ՝ կրծատու այդ մրցոյթների քանակը և դրանց փոխարէն պաշտօնական խաղերից առաջ գտնան մրցոյթներ կազմակերպել:

**Մասպարտութեան և թմրամոլութիւնից զերծ լինելու վկայագիր պահանջելը ՊԺ-ի թէկնածուներից վիրատրական է.**- Սոյն բականի սեպտեմբերի 11-ին Հայոց Ակումբում, 12-րդ Պատգամատրական ժողովի ընտրութիւնների հետ կապահանջանարդները չեն փոխարէնել հետացած կամ վախճանած թէկնածուներին: Բ- Արդէ՞օր վիրատրական չէ թէկնածուներից մնապարտութեան և թմրամոլութիւնից զերծ լինելու վկայագիր պահանջել:

Պրն. Ռուբիկ Կարապետեանը պատասխանեց, որ այդ կապակցութեամբ Թէմական Խորհրդում նաև տարրեր կարծիքներ գոյութիւն ուներ, բայց վերջնական որոշում տաղը ԸԿՅ-ն է:

**Իրամի հայ ազատամարտիկները գնահատեցին Թաղէյի Վաճառում (Քրան օրաքերը 29.08.00).**- Բ. Սշակոյիքի և Առաջնորդութեան նախարար՝ պրն. Մոհաջերանի ներկայութեամբ բարձր գնահատեցին հայ ազատամարտիկները, որոնք միևս իրանցի հայրենակիցների հետ

կողք-կողքի պաշպանեցին մեր իրան-հայրենիքը:

### ԱՆՑ ՎՅ

**Կենաքի կոչեց «Կրօնական վորումասառութիւնների իրաւունքների պաշտպան» խորհուրդ (Հայարէ Նօ օրաքերը 09.09.00).**- Խամամական մարդու իրաւունքների յաճճախսրի նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ խորհրդաժողով, որտեղ մասնակցում էին կոնսական վորքամասնութիւնների ներկայացուցիչները: Յայտնի դարձաւ, որ երկրի նախագահի նախաձեռնութիւններից է՝ մի կոմիտե ստեղծել, որը պետք է զբաղի վորքամասնութիւնների իրայատուկ դժարութիւններով: Յոյսեր ներշնչեցին դարձաւ պարագաները և անքան մրցոյթները: Այդ ժամանական նաև արտասահմանում ապրող իրանցիների հարցերը:

**ՄԱԿ-ում քաղաքակրութիւնների երկխոսութիւններ սկսեց Խարամիի ելոյրով (Համշակի օրաքերը 06.09.00).**-



Սոյն բականի սեպտեմբերի 5-ին, տեղի ունեցաւ վերոյիշեալ հանդիպունք, որին մասնակցում էին 30 երկրների ներկավարները: Պրն. Խարամին իր ելոյրում բացասրութիւններ տես Խարամի պատմական, քաղաքակրութեան և կիմայական իրավիճակի մասին: Նա նշեց նաև թէ մեր երկիրը ինչ դեր պետք է ունենայ քաղաքակրութեան, մշակոյթի ըստեղծման և մարդկութեան ծառայելու գործում:

**Երեք տարի յետոյ Քրանում ջրամատակարաման դժարութիւնների կատացանայ (Հայարէ Նօ օրաքերը 07.09.00).**- Խարամի Էներգետիկայի Խախարարութեան ջրի մատակարարման բաժնի փոխախառնագահ՝ ին-

## ԷԱԾՈ»Ն

Ժիմեր Ռասուլ Զարգարը յայտնել է, - Եթէ այս ձեռվ շարունակի ջրի օգտագործումը, 2003 թականից յետոյ անպայման ջրամատակարարման դժւարութիւններ կունենանք, եւ 2021 թականից կը միանանք անբարար ջուր ունեցող երկրների շարքին:

**Աշխարհի բոլոր երկրների ղեկավարները պայմանաւորեցին պայքարել իհանդուրեան, ջրատրութեան եւ պատերազմի դէմ (Հայարք Նո 10.09.00).-** ՍԱԿ-ում նրանք խօստացել են իջեցնել ջրատրութեան քիր, պայքարել Էյրզի դէմ միմեանց հետ սերս համագործակցութիւն ըստդեմով: Նրանք մտադիր են ՍԱԿ-ի հնարաւորութիւնները զարգացնել, որը պիտի ծառայի խաղաղութեան և ապահովութեան:

**Իրանի խորհրդարանը եւ իշխասնութիւնը կուսակցական աշխատանքների առջեն դրած խոչընդուներոր վերացնում են (Իրան օրաթերթ 12.09.00).-** Արտաքին քաղաքականութեան եւ ազգային անվտանգութեան յանձնաժողովում օրակար է դառնալու վերոյիշեալ հարցը: Յոյներ են ներշնչում ապագայում կուսակցական աշխատանքների հետ կապած՝ կը վատերացի համընկանուր կամնեները: Յանձնախորմի գեկոյցի մէջ նշանակ է, որ այս կուսակցութեամբ մեծ աշխատանք պէտք է տանի ներքին գործոց նախարարութիւնը:

**Աւելի քան 18 միլիոն աշակերտահաճախեցին դասարանները. - Ուսումնական նոր տարեշրջանում Իրանի մէջ 18 միլիոն 885 հազար 771 աշակերտ յանախել են դասարան:**

Ուսումնադաստիհարակչութեան նախարարութիւնն այս մասին մի հաղորդագրութիւն երազարակերպ՝ աւելացրել է, թէ տարրականի աշակերտութեան քիր 8 միլիոն 35 հազար 100, ուղեցոյցին՝ 5 միլիոն 369 հազար 924, միջնակարգին՝ 5 միլիոն 129 հազար 47, նախակրթարանին՝ 276 հազար 700 եւ թերած 75 հազար է:

**Թ<sup>3</sup> Մ<sup>3</sup> է<sup>3</sup> Յ<sup>3</sup>**

**Հայաստանը պայքարում է ծխնկութիւմ (Հայաստանի Համբաստութիւն օրաթերթ 12.07.00).-** 20-րդ դա-

րում ամբողջ աշխարհում ծխելու հետեւանով մահացել են 100 մլն. մարդ: Ըստ կանխատեսումների, 21-րդ դարում այս ցուցանիշը կը կազմի 1 մլրդ: Ծխելու հետեւանով մահացածների թիր շատ աւելին է, քան սպիդի (Էյրզի), թմրամոլորեան, աւտովթարների հետեւանով մահացածներին միասին վերցրած:

Ներկայումս ծխող է համարում ԱՄՆ-ի բնակչութեան 20 տոկոսը, Եւրոպայի բնակչութեան 30 տոկոսը, Ռուսաստանի բնակչութեան 70 տոկոսը: Հայաստանում այդ քիր կազմում է 60 տոկոսից աւելի: Նախնական տեսակների համաձայն, Հայաստանում օրական վաճառում է 700 հազար տոսիք ծխախոտ, իսկ ընդհանուր առմանք, բնակչութեան կողմից տարեկան ծախսում է 200 մլն դրամ, այն դէպում, երբ պիտական քիոզէն կազմում է մոտ 450 մլն ԱՄՆ դրամը:

**Վերամշակել է սելի քան 7000 տոռնա ծիրան (Հ. Համբաստութիւն օրաթերթ 19.07.00).-** ՀՀ գիտնախարարութեան սոյն թականի յուլիսի 17-ի տեսաներով, միայն Արարատի, Արտաշատի եւ Արմավիրի պահածոների գործարաններն ընդունել եւ վերամշակել են աւելի քան 7000 տոռնա ծիրանի հումք:

**Ավստահութիւն կարծած գործերին (Հայկական ժամանակ օրաթերթ 19.07.00).-** Մամուլում եւ հեռուստանեսութեանը հրապարակեց հոկտ. 27-ի ոճրագործութեան ժամանակ գոհածների հարազատների քաց նամակը, որ նրանք ասում են, որ Ս.Յարութիւնեանի, Յ.Յարութիւնեանի, Ն.Բարձրեանի եւ Մ.Մովսիսեանի մասերով քրեական գործի վարդյըր կարծել է, երբ նախաքննութեամբ արդէն իսկ ապացուցած եւ հիմնաւորած է եղել նրանց մասնակցութիւնը ահարեւկչութեանը: Այսինքն, զոհերի հարազատներն անվլատանութիւն են յայտնում կարծած գործերին:

**Իրանում հայկական եկեղեցիներ են վերականգնում (Հայաստանի Համբաստութիւն օրաթերթ 29.07.00).-** Անցեալ տարի ՀՀ պատմութեան եւ մշակոյթի յոշարձանների պահպանութեան վարչութիւնը

իրաիրեն էր գիտաժողով՝ «Հայկական յոշարձանների պահպանութեան խնդիրները արտերկրում» թեմայով: Դա պարտաւորութիւններ էր ստանձնել արտերկրի հայկական յոշարձանների նկատմամբ: Նշել էր, որ Իրանի Խալանական Հանրապետութիւնում գործում է Թեհրան-Իրանի հայկական յոշարձաննան յանձնախումը, որի նախագահն է ճարտարապետ Վարչապետական Առաքելեանը:

## ԹԷՅՅ<sup>2</sup> Վ<sup>2</sup> ՍԱՅ

**Շորջիայի ոչ դեմոկրատիկ քարականութիւնը նրա զգնածամասի հիմնական պատճառն է (Հայարք Նո օրաթերթ 10.09.00).-** Թուրքիայի Քուրդեստանի բանուրական



կուսակցութեան ռադիոն (ՊԿԿ) մէջքերում կատարելով իրենց ճերքակալած ղեկավար Օզալանի խօսքերից, յայտնել է վերոյիշեալ միտքը: Օզալանը իր պատճառն է ուղարկել Թուրքիայի ազատ կանանց կուսակցութեան երրորդ համազումարին, նա նշել է, որ Թուրքիայի պետութեան անցեալ 50 տարուա քաղաքականութիւնը ամբողջութեամբ հիմնուած է եղել մարդու իրաւունքների ուսնահարման վրայ:

**Հակասիկարես դեղահասը լաւ ընդառաջում է գտել Խտայիայում (Համշակի օրաթերթ 09.09.00).-** Այս դեղահասը, որ նոր էր ներմուծել Խտայիայի շուկայ, 24 ժամ ներմուծելուց յանոյ լրի սպառեց: Խտայիայում 14 միլիոն հոգի ծխախոտ են ծխում: Պետութիւնը որոշել է ծխելու արգելել հանրային վայրերում: Այս դեղահասութիւնը արժեքը գնահատել է իրաքանչիրը 1.6 դրամ:



## Հասարակական


### «Հայաստանը շարունակում է կառուցել ժողովրդավարութեան սկզբունքների եւ օրենքի գերակայութեան վրայ հիմնած բաց հասարակութիւն»

Հայաստանի Հանրապետութեան նախագահ  
Ողբերտ Չոչարեանի ելոյթը ՍԱԿ-ի գլխաւոր  
Ասամբլեայի 55-րդ նստաշրջանում.  
(Հազարամեակի գագաթնաժողով)

7 սեպտեմբերի 2000թ. Նիւ Եօրք

Պարոն նախագահոյ,  
պարոն գլխաւոր քարտուղար,  
յարգելի գործընկերներ,  
տիկնայր եւ պարոնայր.  
Գլխաւոր քարտուղարի գեկոյցը՝ քսանմէկերորդ դարում ՍԱԿ-ի դերի մասին, արժանի է քարձը զնահատականի: Հայաստանը համաձայն է մեր, իր տեսակի մէջ միակ, համընդգրկում կազմակերպութեան հիմնահարցերի ու խնդիրների վերաբերեալ գեկուցում արտացոլած մօտեցումների ու հայեցքների հետ: Նոր հազարամեակի արշավոյան մեր հնարաւորութիւնների եւ միաժամանակ խնդիրների մասշտարքները որակական նոր աստիճանի են հասել: Հայաստանը վստահ է, որ ՍԱԿ-ը, ելնելով իր առանձնայատուկ դերից, ունի ժամանակի մարտահրաւերմներին համարժեք պատասխանելու լաւագոյն ներուժը: Այն հսկայական փորձը, որ մշակել է 55-ամեայ գործունեութեան ընթացքում, բացառիկ է: Յենթերև դրա վրայ՝ մենք պարտաւոր ենք աւելի արագաշարժ լինել ՍԱԿ-ի գործիքներն ու հաստատութիւնները նոր իրողութիւններին աղապտացնելու գործում: Ակրնյայուն է, որ խաղաղութեան եւ կայունութեան ամրապնդումը ՍԱԿ-ի համար հիմնական առաջնահերթութիւն է մնում 21-րդ դարում: Աշխարհի ժամանակակից քարտեզը դեռևս խիստ կերպով ներկաւ է լոկալ հակամարտութիւններով եւ, իբրև դրանց արդինք՝ մարդկային տառապանքներով: ՍԱԿ-ն ակտիվորեն ներգրաւած է աշխարհի տարրեր մասերում առկայ հակամարտութիւնների լուծնան մէջ: Միաժամանակ, Հայաստանը վստահ է, որ հնարաւոր հակամարտութիւնները կանխելու ՍԱԿ-ի ունեցած ներուժը իրականացնում է ոչ լիովին: Անհրաժեշտ է մշակել վահորօք կանխազգուշացման ունիեթքալ մեխանիզմներ: Անըսպասելի պատերազմներ չեն լինում. նրանք բոլորն եւ ունենում են իրենց կենսագրութիւնը, իրենց տրամարանութիւնը եւ կանխատեսելի են: Արդի մեր աշխարհում

«անվտանգութիւն» հասկացութիւնը դուրս է եկել սովորական շրջանակներից: Գլոբալիզացիան հասարակութիւնները դարձել է աննախադեպ աստիճանի բաց: Կառավարութիւնների գործունեութիւնը, ինչպէս երբեք, կախում ունի փոխկապակցուած, փոխհամա-ձայնած գործողութիւններից՝ ներառարածքային, տարածաշրջանային եւ զլորալ մակարդակներում: Ինտեգրացիան դարձել է քաղաքականապէս և անտեսապէս նախատակայարմար: Ակնյայտ է, որ գոյակցութեան նոր միջավայրը պահանջում է նոր մօտեցումներ նաև միջազգային կազմակերպութիւնների գործունեութեան մէջ: Միայն կողեկտիւ ջանքերով է հնարաւոր արդինաւագործն իրականացնել զլորալիզացիայի առաւելութիւնները եւ պաշտպանել նրա բացասական հետեւանքներից: Այլ խօսքով, ըրանմէկերորդ դարի աշխարհն ունի կողեկտիւ գործողութիւնների եւ պատասխանատութեան վրայ հիմնած իսկական կայունութիւնն հասնելու բոլոր նախարդեանները: Այսիսկ են Հայաստանի յոյսերը: Պարոն նախագահոյ, Հայաստանը նոր հազարամեակ է մտնում՝ յաջորդ տարի տօնելով քրիստոնութիւնը որպէս պետական կրօն ընդունելու 1700-ամեակը: Սեր բազմադարեան պատմութիւնը եւ քրիստոնեական աւանդութեանը, ինչպէս նաև աշխարհագրական դիրքը նպաստել են քաղաքակրթութիւնների երկխօսութեան եւ համագոյակցութեան նշանակութեան խորքային գիտակցմանը: Հայաստանն աշխարհի այն նասում է, որը վերջին տասը տարուայ ընթացքում ենթարկել է քաղաքական եւ սոցիալական բնոյրի հսկայական փոփոխութիւնների: Ժառանգելով անցեալի չուծած խնդիրները՝ Հայաստանը եւ Հարաւային Կովկասն ամբողջութեամբ գերծ չմնացին հակամարտութիւններից: Ներկայիս իրողութիւնները շարունակում են նշանակալի ճնշում գործադրել երկրի ներսում առկայ նոր սոցիալական եւ քաղաքական յարաբերութիւնների անկայուն կառուցածքի վրայ: Այսուհանդեմ, Հայաստանը շարունակում է կառուցել ժողովրդավարութեան սկզբունքների եւ օրենքի գերակայութեան վրայ հիմնած բաց հասարակութիւն:



Ժար. տեսմեն էջ 23-ում

## Տնտեսական

Հարցազրոյց՝

Հայաստանի Եներգետիկայի նախարար՝

### Կարեն Գալստեանի

հետ

Հ.- Պրն. Գալստեան, նախ քոյլ տուք քերքի ամունից շնորհակապորին յայտնել Ձեր բանկազին ժամանակը մեզ տրամադրելու համար: Կը խնդրենք պատմել Ձեր ունեցած առաջելութեան և ձեռքբերումների մասին:

Պ.- Նախ եւ առաջ օգտուելով առիթից՝ ես էլ իմ հերթին շնորհակապորին եմ յայտնում, ձեր ցուցաբերած ոչարդութեան համար: Երկու օր բաւականին լորջ աշխատանք էր գնում: Տարեր հանդիպումներում բազմաբնոյք հարցեր քննարկեցին: Գործնականորեն բոլոր հանդիպումների ժամանակ քննարկում էր Իրան-Հայաստան համագործակցութիւնը: Հանդիպումներ ենք ունեցել նաւթի նախարար՝ պրն. Զանգանի, փոխնախարար՝ պրն. Ռահղողարի, եւ արտաքին գործոց փոխնախարար՝ պրն. Աղեղիի հետ: Այդ հանդիպումներին մասնակցում էր պրն. Թահերին, որը այսօր հանդիսանում է Իրան-Հայաստան գազամուղի կառուցման գծով՝ Իրանի արտաքին գործերի նախարարութեան ներկայացուցիչը: Եղան հանդիպումներ արտաքին գործոց նախարար՝ պրն. Խարազիի եւ Իրանի նախագահի առաջին օգնական՝ պրն. Հարիթիի հետ: Ինչպէս տեսնում եք ընդունելութիւնը կազմակերպութեան առողջութեան համագործակցութեան առողջութեան առողջութեան գործութիւնում: Այսուհետեւ կը ընդունելութիւնը կազմակերպութեան արտաքին գործոց նախարար՝ պրն. Խարազիի եւ Իրանի նախագահի առաջին օգնական՝ պրն. Հարիթիի հետ: Քննարկման մեկ մասը, վերաբերում էր համագործակցութեան ներգետիկայի (նաւթային) քննագաւառում, քանի որ ես ինքու նախարար եմ եւ պարզ է, որ պէտք է մենք ուսումնասիրենք այս բոլոր դաշտը եւ տեսնենք թէ համագործակցութեան այլ ի՞նչ ուղղութիւններ կան: Եղել է նաեւ հանդիպում ներգետիկայի փոխնախարար՝ պրն. Մալեքի հետ՝ «Թամանիք» ընկերութիւնում: Այստեղ կատարում է գործնականորեն ներգիտայի փոխնախակում, ձմեռուայ ամիսներին մենք ենք ստանում էլեկտրուեներգիա՝ Իրանից, ամառուայ պայմաններում մենք ենք ուղարկում: Այսինքը դա կախուած է համապատասխան ներգետիկ ռեժիմից: Մենք ունենք դժվարութիւններ ձմեռուայ ամիսներում: Իրանում կան խնդիրներ ամառուայ ամիսների ընթացքում: Այսօր նաեւ այդ համագործակցութեանը մի-անում է Թուրքմենստանը եւ քանի որ Իրանի հետ սահմանակից է, գործնականում ունենք լաւագոյն եռա-կողմանի համագործակցութիւն: Սիս խնդիրը որ էներգետիկայի հետ է կապուած, եւ նոյնպէս ուսումնավարական կարեւոր խնդիրներից մէկն է, դա Իրան-Հայաստան գա-զանուն է: Այս ուղղութեանը աշխատանքները սկսել են դեռևս 90-ական թավանների սկզբին: Եղել են յաջողութիւններ եւ գործնականորեն եղել են ժամանակներ, որ գործը կանգնել էր եւ առաջ չէր գնում:

Այս վերջին ամիսների ընթացքում գործը բաւականին լորջ ակտիւացաւ, որովհետեւ գազի շուկան գնալով զար-



գանոս է, բացի նրանից մենք կարողացանք համապատասխան Ֆինանսաւորում ստանալ, որպէսզի այդ գաղամուղը կառուցենք եւ այսպիսի որոշում տրնեց, որ Իրանի գաղամուղը կառուցում է իր տարածքում, իսկ հայկական կողմը կառուցում է դա իր տարածքում եւ եթէ ամէն ինչ նորմալ լինի, ապա գործնականորեն մինչեւ 2001թ. սեպտեմբերի 1-ը մենք կարող ենք վերջացնել աշխատանքների առաջին փուլը: Դա նշանակում է Իրանի տարածքում մօտաւորագիւ 100 կիլոմետր, իսկ Հայաստանի տարածքում 40 կիլոմետր շինարարութիւնը: Նրանից յետոյ արդէն կարելի է շարունակել միևն փուլերը: Եթէ իրականացնենք այդ փուլը, մենք կարող ենք Հայաստանին մատակարարեն կես խորհնամետը զազ՝ Իրանից: Հայաստանը ապրել է լորջ էներգետիկ ճգնաժամ, եւ այդ ճգնաժամից քաղել լորջ դասեր եւ մենք անում ենք իմանական ամէն ինչ, որ կարողանանք ստեղծել այլնուրանք եւ դիվրիֆազացած աղբիւներ եւ գործնականորեն այդ գաղամուղի կառուցումը թոյլ է տալիս մեր էներգետիկայի անվրտագործութիւնը բերել աւելի բարձր մակարդակի: Դոր գիտեր, որ Հայաստանը այսօր էներգետիկայի բնագավառում ԱՊՀ երկրների մէջ ամենազարգացած երկիրն է: Մենք արդէն մի քանի տարի է, որ ունենք 24 ժամեայ էլեկտրուեներգիա մատակարարում, կատարում ենք իմանական ամսայական գաղամատակարարում: Ես կարեւորում եմ նաեւ այլ հանգամանք՝ ինձ պատի է տրած եւ ես իմանա այսօր գործնականորեն դեկավարում եմ Իրան-Հայաստան յանձնաժողովը: Հայկական կողմից, ՀՀ վարչապետի որոշումով այստեղ ներգրաւած են մի շարք նախարարներ, որոնց մէջ են նաեւ Ֆինանսներ եւ էկոնոմիկայի, տրանսպորտի, առողջապահութեան եւ կրթութեան նախարարները. Ազգային Ակադեմիայի նախագահ՝ պրն. Ֆ. Սարգսեանը եւ այլն: Նախ եւ առաջ պայմանաւորեցինք, որ նոյեմբեր ամ-սում կը լինի համատեղ նիստ Երեւանում: Պայմանաւորեցինք, որ մինչեւ այդ կը լուծենք բոլոր խնդիրները եւ պրոբլեմները, որ այսօր առկայ են: Պայմանաւորեցինք, որ դիտարկենք այլ տեսակ ծրագրեր, որոնք կարող ենք ներդրել եւ որոնք մենք կը ներկայացնենք իրանական կողմին: Համաձայնութեան եկանք, որ մենք նաեւ ներկայացնենք այն ապրանքների ցանկը, որ արտադրում են Հայաստանը եւ մեր կազմիրով հնարաւորութիւն կայ կատարեալ արտածում դէալ Իրան: Այդ բոլոր հարցերը իհարկէ դնելու ենք քննարկման՝ գալիք համատեղ նիստի ժամանակ: Պէտք է ասել որ մեր համաստեղ նիստը մենք ուզում ենք անցկացնել նաեւ այն ժամանակ, եթէ որ

## Տնտեսական

կը լինի Իրանի մեծ ցուցահանդէալ Հայաստանում։ Այդ ծրագրերի մէջ իհարկէ շատ կարևորում է ճանապարհի հարց։ ճանապարհի հարցը, որը կապում է Իրանը, Հայաստանը, Վրաստանը եւ հնարատրութիւն է տալիս դուրս գալ Ռուսաստան, Սեւ Ծով եւ Վերականգնել այն հնուց եղած տրամադրութիւն ճանապարհները, որոնք գոյութիւն ունեին։ Այսուեւ այդ նոր խնդիրների մէջ մենք շատ ենք կարևորում իհարկ Քաջարանի բունելը եւ մենք պայմանաւորւեցինք, որ պէտք է միասին ուսումնասիրենք այդ խնդիրը եւ տեսնել թէ ինչպիսի պատրաստենք տեխնիկատեսական հիմնաւորում եւ այդ հիմնաւորման միջոցով որոշենք ե՞ն Ֆինանսաւորման հարցը ե՞ն կառուցման խնդիրները։ Մենք բարականին կարենուեցինք Մեղրիի տարածաշրջանի զարգացման խնդիրները։ օրինակ հարց բարձրացնեց գուցէ եւ Մեղրիում կառուցել նարավերամշակման գործարան եւ այլ հանգամանքներ, օրինակ՝ սահմանային առեւտուրը վերականգնենք եւ բերենք բարձր մակարդակի, սա է եղել ընդհանուր քննարկման առարկաները, այս երկու օրուայ ընթացքում։

«Լոյ».- Եթէ բոյլ տաք՝ հարցնեմ շինանարութեան հետ կապաւած, նախատեսած մրցոյքի մասին, որովհետու ակնարկեցիք, որ 2001թ. սեպտեմբերին, պէտք է արդէն գործը կատարած լինի։

Պ.- Եթէ պայմանաւորւենք բոլոր հարցերի մասին եւ սկսենք շինարարութիւնը այս տարայ աշնանը՝ մինչեւ միս տարայ սեպտեմբեր մենք կարող ենք գազամուղը աշխատեցնել։

Հ.- Խոկ եքք մրցոյքի բարկանը, յայտարարեք, դա ինչպէ՞ս կը լինի։ Արդիօ՞ք միայն Հայաստաննան եւ Իրանական ընկերութիւնները իրաւունք կունենան մաս-նակցելու։

Պ.- Մրցոյքի մասին դժուար է ասել, որովհետու հարցը հետևեալ ծեսով է դիտարկում, որ Իրանը պէտք է կառուցի դա իր տարածքում։ Թէ ինչպէ՞ս ինքը պէտք է կազմակերպի, ես չեմ կարող հիմա ասել դրա մասին, իսկ Հայաստանը պէտք է դա իրականացնի իր տարածքում։ Հիմա այստեղ կան մի շաբթ հնարաւորութիւններ եւ մենք պէտք է այդ հնարաւորութիւններից օգտիւնը։ Ամենալաւագոյն տարրերակը, այսպիսի մրցոյք յայտարարելն է։

Հ.- Դժարութիւններից մէկը՝ Ֆինանսաւորման հարցը է եղել։ Ասացիք, որ արդէն Ֆինանսաւորում եք արտասահմանի ինչ-որ երկրներից։ Այդ հարցը կարելի՞ է լուծած համարել։

Պ.- Գիտէք, ընդհանուր առմամբ բանաձեր հետեւեալը է։ Հայաստանի տարածքում մասնաւոր ընկերութիւն-ների միջոցով ուզում էինք ստեղծել կոնսորտիում, որը կառուցի այդ գազամուղը։ Սակայն մենք հասկացանք, որ կոնսորտիում ստեղծման գործընթացը ժամանակ է պահանջում, բայց քանի որ անհրաժեշտ է գազամուղը կառուցել ինչքան հնարաւոր է շուտ, ապա որոշում ընդունեց, որ սկսել շինարարութիւնը, մասնաւոր որ կան շատ ընկերութիւններ, որոնք պատրաստ են սկսել այդ շինարարութիւնը եւ այստեղ կան նաև վարկային միջոցների ներգրաման հնարաւորութիւն։



Հ.- Էներգետիկ համակարգի բարձրացման համար՝ կա՞ն այլ աշխատանքներ։

Պ.- Իհարկէ, մենք սկսել ենք էներգետիկայի բնագաւառում, ծրագրային աշխատանք դեռեւ նախաստեղծման օրից՝ 92 թականից եւ մի շաբթ ծրագրեր ենք մշակել այդ ընթացքում։ Բայց իհման մենք ուսենք ծրագիր, որ մի շաբթ տարրերակներ ենք այդտեղ դիտարկում, որոնք կապում են այսպէս ասած մինչեւ 2010, 2015 թականը Հայաստանի հանրապետութեան էներգետիկայի գարգացման ծրագրին։ Այդ ծրագրի իհման վրայ կարող ենք իրականացնել ծախսերը, այսինքն տնտեսական հաշտարկ է կատարած։ Այդ հաշտարկումը ցոյց է տալիս, որ ամենամինհմալ ծախսերով նախակին հասնելու համար ինչպիսի համակարգ պէտք է լինի, որպէսզի կարելի լինի վստահութիւն տալ բանին և ներգրաւել արտասահմանի մասնագետներին։ Այսօր մեզ անհրաժեշտ է ունենալ, եթէ հնարաւոր է այլ գազամուղ եւ դրա համար մենք դիտարկում ենք Իրան-Հայաստան ծրագիրը, որովհետեւ Իրանը աշխարհի երկրորդ երկիրն է իր ուղղակի բանակով եւ մեր հարեւանն է, ինչպէ՞ս կարելի է չօգտագործել այդ հնարաւորութիւնը։

Հ.- Մեղրիում նարավերանը-շակման կենտրոնի ստեղծման հարցը, որ առաջարկել է Հայաստանի վարչականի կողմից, արդէ՞օք քննարկեց բանակցութիւնների ընթացքում։

Պ.- Հայաստանում նարավերան կենտրոնի կապակ-

ցութեամբ շատ անգամ ենք հարցը բարձրացրել, իհարկէ ոչ Մեղրիի տարածքում։ Բայց այսպիսի լրջութեամբ ինչպէս այսօր բարձրացրեցինք՝ չի եղել։ Այսպէս կարելի է ասել, քանի որ որեւէ նախագիծ ունի մի քանի փոլ, մենք սկսում ենք այդ նախագծի նախնական տեխնիկատեսական ուսումնափուլը, որ ցոյց կը տայ դա ի՞նչ ծաւալի նարավուման գործարան պիտի լինի, ինչքանը վ եւ ի՞նչ ճանապարհով հում նարավ պիտի բերի, կամ որտեղի՞ց, ստացած վառելիքը ինչպէ՞ս կարելի է տարածել լրի հանրապետութիւնում։ Այս բոլորը պէտք է ուսումնափուլ։

Հ.- Իրան-Հայաստան յանձնաժողովը, ի՞նչ նպատակ-ներ է հետապնդում։

Պ.- Մի նպատակ կայ միայն, զարգացնել մեր հանրապետութեան ծրագրերը։ Շատ ծրագրեր կան, այդ ծրագրերը պէտք է իրականացնեն, դա է մեր խնդիրը։

Հ.- Վերջում ի՞նչ դրական բաներ կարող եք ասել Հայաստանի քաղաքական կենսքի կամ աշխատատեղի ստեղծման մասին։

Պ.- Պէտք է ասեմ, որ այս վերջին ամիսների ընթացքում լուրջ զարգացում է արձանագրել արդիւնագործութիւնը։ Պոնձի եւ մոլիարենական արտադրութեան ոլորտը լուրջ զարգացում է ստանում, «Նայիրիտ»-ն է իհմա աշխատանքը վերականց։ Այս բոլորը յոյս են ներշնչում։ Հայաստանը իմ կարծիքով արդէն նոր վերելք է ապրում և այդ դիմամիկան աւելի ու աւելի կը գարգանայ։ ■

Հարցազրոյցը վարեց  
Ռ. Սարգսյանը

## Î² ÜàÜ², ðàôÂÆôÜªÂ °Ðð² ÜÆ Ð² Úàò Â °ØÆ

### 13.ՅԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

#### ՅՈՂԱԾ 79

Հանրային յարաբերութիւնների մը-  
շակման, քարոզական աշխատանք-  
ների ձեռնարկման և հրատարակչա-  
կան գործերի կատարման նպատակով  
Թեմական Խորհրդի կողմից կեանքի է  
կոչում մի Յարաբերական Սարմին,  
քաղացած 5-7 անդամներից երկու  
տարիայ ժամանակաշրջամի համար:

#### ՅՈՂԱԾ 80

Յարաբերական Սարմին պարտա-  
կանութիւններն են՝

ա- Հայանապատ խնդիրների վե-  
րաբերմամբ, յարաբերութիւններ հաս-  
տատել և հանդիպութիւններ ու տեսակ-  
ցութիւններ ունենալ պատկան կամ  
պաշտօնական շրջանակների հետ,  
Թեմական Խորհրդի յանձնարարու-  
թեամբ:

բ- Հրատարակել պարսկական և  
կամ հայ նամուլում յօդաններ, յայ-  
տագրեր, կոչեր ու լուսաբանութիւններ  
հայ համայնքին վերաբերող խնդիրնե-  
րի մասին:

գ- Մշակութային Սարմին համա-  
գործակցութեամբ, պատրաստել հայ  
ժողովրդին օգոստակար հանդիսացող  
ծրագրեր, պետական ճայնացիրից ու  
հետուատաւելից:

դ- Հրատարակել տեղեկասոու և  
կամ այլ տեսակի պարտերակներ՝ հա-  
մայնքին տեղեկալ պահելու համար  
Թեմական Խորհրդի, Պատզանատրա-  
կան Ժողովի և այլ ազգային մարմին-  
ների գործունեութեան մասին:

ե- Ընդէտոնել քարոզական միջոց-  
ների, համայնքին անելի կասպելու հայ  
Եկեղեցու և դպրոցի, ինչպէս նաև ազ-  
գային այլ նարմինների և հաստատու-  
թիւնների հետ:

զ- Կազմակերպել ընդարձակ և  
վայերական փետականութիւն թնդ  
բոլոր շրջանների հայ ազգաբանակ-  
չորթեամ պարտնակելով անհրաժեշտ  
և սպառի տեղեկութիւններ:

#### ՅՈՂԱԾ 81

Յարաբերական Սարմին նիրա-  
կան գործանութիւնները կատարում  
են Թեմական Խորհրդի միջոցով:

#### ՅՈՂԱԾ 82

Յարաբերական Սարմինը ենթա-  
կայ և Թեմական Խորհրդի հակակըց-  
ունի և տած որոշումներին իր գործու-  
թեամբ շրջանի ամէն տարեվերջին,  
միանեայ գեկուցը ներկայացնում է  
Թեմական Խորհրդին:

#### 14. ԿԱՐԻՔԱՌՈՐԾԵՐԻՆ ՕԺԱՆՈԿՈՂ ՄԱՐՄԻՆ

#### ՅՈՂԱԾ 83

Թեմական շրջանում գուրի և բարե-  
սկական աշխատանքները համադրե-  
լու և կատարելու համար, Թեմական  
Խորհրդուրը 9-13 ձեռնահաս ազգային-  
ներից նշանակում է մի մարմին որը  
կոչում է կարիքատորներին օժանդա-  
կող մարմին, երկու տարիայ ժամանա-  
կաշրջանով:

#### ՅՈՂԱԾ 84

Թեմական Խորհրդի հրաւերով գու-  
մարում է Անդրամիկ նիստը, ուր կա-  
տարում է դիանի ընտրութիւն հետե-  
ւալ կարգով՝ ատենապետ, ատենա-  
դպակիր, զանձապահ և գոյքա-պահ:

#### ՅՈՂԱԾ 85

Կարիքատորներին օժանդակող  
մարմինը ունենում է իր Կենտրո-  
նաւելին Առաջնորդարանում կամ մի  
այլ հանրայայտ վայրում, որը պիտի  
օժուած լինի պահեստներով և յարա-  
կից յարմարութիւններով:

#### ՅՈՂԱԾ 86

Կարիքատորներին օժանդակող  
մարմինը ուսումնասիրում է իրեն դի-  
մող ազգայինների կարիքները և ըստ  
ներքին կանոնագրի տրամադրու-  
թեան հոգում է նրանց պէտքերը:

#### ՅՈՂԱԾ 87

Կարիքատորներին օժանդակող  
Սարմին նիրական միջոցները գոյա-  
նում են հետեւելալ աղքալմերից

ա- Թեմական Խորհրդի կողմից  
յատկացած բուոցէից.

բ- Դրամական և նիրական նի-  
րատութիւններ, անհատներից կամ այլ  
բարեգործական հաստատութիւննե-  
րից.

դ- Զետնարկներից կամ արտօն-եալ  
հանգանակութիւններից.

#### ՅՈՂԱԾ 88

Թեմական Խորհրդի արտօնութ-  
եամբ և անունով մարմինը ունի յա-  
տուկ բանկային հաշիր, որի գործառ-  
նութիւնը կատարում է մարմին միջո-  
ցով ըստ իր ներքին կանոնագրութեամ:

#### ՅՈՂԱԾ 89

Կարիքատորներին օժանդակող  
Սարմինը ենթակայ և Թեմական Խոր-  
հրդին և իր միմեայ գեկուցումը ներ-  
կայացնում է նրան իրաքանչիր տա-  
րելերջին:

#### ՅՈՂԱԾ 90

Կարիքատորներին օժանդակող  
Սարմինը ունի իր ներքին կանոնա-  
դրութիւնը որը վաւերացում է Թե-  
մական Խորհրդի միջոցով:

#### 15. ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

#### ՅՈՂԱԾ 91

Թեմական քաղաքում գտնուող ազ-  
գային գերեզմանատների գործերը վա-  
րչեալ համար, Թեմական Խորհրդուրը  
ունի Կանոնադրութեան յօդած 42-ի  
տրամադրութեան համաձայն կեանքի  
է կոչում 5-7 ազգայիններից բաղկա-  
ցած մի վարչութիւն, երկու տարիայ ժա-  
մանակաշրջանով:

Թեմական Խորհրդի դիանը ժո-  
ղովի և իրական վերոյիշեալ վար-  
չութեան անդամներին, որոնք իրենց  
դիանի ընտրութիւնը կատարում են  
հետեւելալ կարգով՝ մի ատենապետ մի  
ատենադպակիր և մի զանձապահ:

Գերեզմանատնամբ վարչութիւնը ըս-  
տանձնելով իր պաշտօնը այնուետեւ  
իր ժողովները և գումարում Ազ-գային  
Առաջնորդարանում եւ վերահասու լի-  
նում իր խնամքին յանձնած գերեզմա-  
նատների աշխատանքներին:

Ծանօթ. Շրջաններում գերեզմանա-  
տնամբ վարչութեան աշխատանքները վա-  
րում են Եկեղեցա-Դպրոցական հոգս-  
արձութիւնները:

# Â»Ù³ Í³ Ý

## ՅՈՂԱԾ 98

Թեհրան քաղաքում, պսակ կատարելու իրաւունքը տալիս է Թեմակալ Առաջնորդի, իսկ Թեմի միւս շրջաններում, Թեմակալ Առաջնորդի կարգադրութեամբ, պսակի արտօնութիւնը տալիս է Եկեղեցական խորհուրդը կամ Եկեղեցա-դպրոցական հոգարաքութիւնը ծխատէր քահանայի մասնակցութեամբ, եթէ պետական պատկան հիմնարկը յատուկ հաստատագրով, նրանց արտօնել է պսակի արձանագրութեան իրաւունք և տրամադրել է համապատասխան մատեաններն ու վկայագրերը:

## ՅՈՂԱԾ 99

Եկեղեցական Խորհուրդը պարտաւոր է գանձել եւ հաշարկել Եկեղեցական հաստյթերը, որոնք սոյն կանոնադրութեան յօդած 126-ի դկտի համաձայն նուժում են Ազգային Առաջնորդարանի գանձարկոր:

## ՅՈՂԱԾ 100

Եկեղեցական Խորհուրդը հոգածու պիտի լինի Եկեղեցու բարեկարգութեան, կարգապահութեան և գոյքերի անվիար պահպանման նկատմամբ:

## ՅՈՂԱԾ 101

Եկեղեցական Խորհուրդը նկատի ունենալով քաղի ընդարձակութիւնը եւ ծխականների շնչագրական տրեալները, կատարում է համապատասխան շնչագրութիւն, այնուհետև Թեմական Խորհուրդը կատարում է համապատասխան ծխարաշխում:

## ՅՈՂԱԾ 102

ա- Ծխատէր քահանայ կամ քահանաներ պաշտօնի կոչելու իրաւունքը պատկանում է Եկեղեցական խորհրդին: Այս նպատակով, հայցագիր է յուսմ Թեմակալ Առաջնորդին, որը յատուկ հաստատագրով վատերացնում է Եկեղեցական խորհրդի Թեմականութիւն:

բ- Ծխատէր քահանան կարող է բացակայել իր ծովակա միայն պատկան Եկեղեցական խորհրդի գրաւոր:

արտօնութեամբ եւ Թեմակալ Առաջնորդի հաստատումով:

## ՅՈՂԱԾ 103

Եկեղեցական Խորհուրդը, իր գործունեութեան շրջանի ամէն տարեվարչին, իր միամետայ գործունեութեան գեկոյցը ներկայացնում է Թեմական Խորհրդին:

## 17. ԾԽԱԿԱՆ ՏՈՒՐԵՒԹԵԱՅԻՆ ՍՄՐՄԻՆ

## ՅՈՂԱԾ 104

Ծխական տուրքի կենտրոնական մարմնը, սոյն կանոնադրութեամբ ճշտած քաղերի համար, պատկան քաղի սրոցաւ եւ աշխատունակ ազգայիններից, նշանակում է 5 անդամից քաղկացած ծխական տուրքի քաղային մարմնին, երկու տարիայ ժամանակաշրջանով, եւ սոյն մարմնների անձնակազմը հաղորդում Թեմական Խորհրդին առ ի հաստատում:

## ՅՈՂԱԾ 105

Ծխական տուրքի քաղային մարմնը, Թեմական Խորհրդի հաստատումից անմիջապէս յատոյ, ծխական տուրքի կենտրոնական մարմնի դիւանի միջոցով ժողովի է իրափրուու եւ կատարում իր դիւանի ընտրութիւնը հետեւեալ կարգով՝ մի ատենապետ, մի ատենադպիր եւ մի գանձապահ:

## ՅՈՂԱԾ 106

Ծխական տուրքի Թաղային մարմնը, ըստ ծխական տուրքի կենտրոնական մարմնի տաճ ցուցմներների եւ խորհրդների, ճշտում է գործնական միջոցներ, ծխականների արձանագրութեան եւ ծխական տուրքի գանձումները դիւրին կերպով կատարելու համար:

Ծխական տուրքի Թաղային մարմնը, հարկ եղած դէաքում, կարող է ունենալ գրասենեակային պաշտօնայ եւ գանձիչ:

## ՅՈՂԱԾ 107

Ծխական տուրքի Թաղային մարմնը, գործի անցնելիս, ծխական

տուրքի կենտրոնական Արամնից ստանում է զանձումների արձանագրութեան յատուկ ժապահնեալ մատեաններ, քարքեր եւ համարակալած անդրքագրեր:

## ՅՈՂԱԾ 108

Ծխական տուրքի Թաղային Արամնից ամէն ամիս իր կատարած զանձումները մուծում է ծխական տուրքի Կենտրոնական Արամնի հաշիմ:

## ՅՈՂԱԾ 109

Իրաքանչիւր տարեվարչին, ծրխական տուրքի Թաղային Արամնինը, իր Եկեղեցական գործառնութեան հաշեւելիքոր ներկայացնում է ծխական տուրքի կենտրոնական մարմնին որն իր հերքին ներառում է այն Թեմական Խորհրդին յղելիք գեկոյցագրի մէջ:

## 18. ԾԽՈՂԱ-ՌԻՍՈՒԹՅԱԿԱՆ ԽՈՐՃՈՒՐԴ

## ՅՈՂԱԾ 110

Դպրոցների Կրթադաստիարական աշխատանքները արդինատերելու մոտ եւ ծնողների համագործակցութիւնը ապահովելու եւ նրանց կապը սերտացնելու համար, ըստ Կրթական նախարարութեան կանոնադրութեան, կեանքի է կոչում ծնողա-ուսուցչական խորհուրդ իրաքանչիւր դպրոցի համար:

## ՅՈՂԱԾ 111

Ծնողա-ուսուցչական խորհուրդը ծնողութեամբ է երեք տարիայ ժամանակաշրջանով, ծնողների ընդհանուր ժողովից, որ գումարում է դպրոցական տարեսկզբին եւ ամենաուշը մինչեւ Մեկը 15-ը:

## ՅՈՂԱԾ 112

Ծնողական ընդհանուր ժողովը իրակաս է դպրոցի տեսուչը, եւ տեղի վրա ընտրութ երեք հոգուց քաղկացած ընտրական յանձնախմբի միջոցով ընտրում են ուր անդամներ եւ ուր անձնակիրանութեր:

**Ճար. 8**

## Հասարակական

### Եկեղ կերտեմը մեր լուսաւոր ապագան

Հարցազրոյց՝

ՍԵՐՈՅ  
ՍՈՒԹԻԱՍԵԱՆԻ

հետ

(Ծարունակութիւն՝ նախորդ համարից)



«. Վերջին մի քանի տարիները բացակայելով համայնքը, Դոգ որեւէ փոփոխութիւն կամ առաջնօրքաց նկատո՞ւմ է ք իմա, արդե՞օք համայնքում առողջ մտածելակերպ առկայ է, թէ՞ ոչ:

Պ.- Ես յոյս ունեի, որ այդ երեւոյք աելի շատ կարտայայտէք եւ շօշափեի կը լինէր, յատկապէս Հայաստանի անկախութիւնը յետոյ, քանզի կային մարդիկ, որոնք դժմ էին այդ գործնիքացին և ծաղրում կամ հեգնական վերաբերնունք էին ցոյց տալիս Հայաստանի զինանշանի, որոշի նկատմամբ՝ համարելով դրանք Ֆաշիստական, իսկ մենք նրանց դժմ անզիջում պայքար էինք մղում: Ես յոյս ունեի, նորից եմ կրկնում, որ Հայաստանի անկախացման գործնիքացի յետոյ, մեր կողմից որոշ քայլեր կը լինէին միասնականութիւն ձեռք բերելու եւ նրանց ներքրաւելու մէջ, սակայն դժբախտաբար յիշեալ ուղղութեամբ առողջացում չեմ նկատել:

«. Զեր կարծիքով, որպէս են դրա պատճառները: Արդե՞օք դրանք բխում են մեր զարգացման բարձր մակարդակից, թէ սահմանափակ մտածելակերպից:

Պ.- Դժբախտաբար մենք կարծում ենք, որ զարգացման բարձր մակարդակ ունենք, իհարկէ ես զատում եմ Հայաստանի ժողովրդին, նրանք իհարապէս զարգացած են, սակայն մենք նոյնիսկ մեր շրջապատի չափ էլ զարգացած չենք, իհարկէ շատ ցաւալի է ինձ համար այս երեւոյքը ընդգծել: Ասեմ որ շատ յաճախ մեզ որակում են որպէս միջակութիւն:

«. Մեր ՊԺ-ն, որպէսզի աելի արդինաւետ գործութերին ծաւալի համայրում, ի՞նչ կազմով պէտք է ներկայանանայ:

Պ.- Իմ կարծիքով ամենառողունելի քայլն այն էր, որ Իրանի պետութեան կողմից վաերացւեցին մեր ՊԺ-ի ընտրութիւնները, այսինքն մեր ժողովրդը այստեղ օրինակելի փոքրամասնութիւն է դարձել: Իրանը ունի փոքրամասնութիւնների միացման մի ընդհանուր համազգային ծրագիր, եւ այս ծրագրը երէ վատ գործադրի կարող է մտահոգութեան առիթ տալ Իրան-հայրենիքի ամբողջականութեան համար: Ես այս ծրագրի մէջ երեւի հարցերն աւելի առաջնակարգ տեղ են գրաւում, մենք ներկայանում ենք որպէս ոչ մուտլման, այսինքն երէ իրենք ունեն գրադաշտական փոքրամասնութիւն, ապա դրանք աշխարհում մեծ թիւ չեն կազմում, իսկ մենք քրիստոնեայ ենք, աշխարհում հաօք երկրները քրիստոնեայ են, նրանք են տնօրինում աշխարհի ճակատագիրը: Նրանք են իրենց պետութիւններում ձեւաւորում ժողովրդի հասարակական կարծիքը կրօնական փոքրամասնութիւնների հանդէա: Ուրեմն այս պէտութիւնն է նայում է տեսնում է թէ ինչպէս

են վերաբերում ազգային փոքրամասնութեան հետ այդ երկրներում: Իրանցիները դա շատ լաւ հասկանում են: Եւ մենք դա պէտք է գիտակցենք, եւ մեր համայնքը կազմակերպած կուր պահենք: Մեր ՊԺ-ը պէտք է լինի բարեկիրք, բմբոնող, մեր ժողովրդի բոլոր շերտերի հետ քայլող, ազգային բոլոր կազմակերպութիւնների, միութիւնների հետ հաշի նստող: Եւ այն մարդիկ, որոնք այս ամենը կը գիտակցեն կը լինեն օրինաւոր պատգանաւորներ:

«. Ո՞րն է Զեր պատգամը՝ ուղղած իրանահայերին:

Պ.- Իհարկէ պատգամ տալը մեծ պատասխանատութիւն է, ես ընդամենք մի խորհուրդ կը տայի: Մեծ յոյսեր պէտք է կապէինը մենք Հայաստանի անկախացման գործնիքացին, յատկապէս Արցախի հայապատկան հողերի ազատագրումից յետոյ մեծ ոգեւորութիւն պէտք է առաջանար իրանահայերի մէջ: Ինչեւէ, իմ խորհանքը հետեւալն է, որ իրանահայերը առանց վախենալու, առանց տատանելու զան Հայաստան եւ միասնական ուժերով կերտենք մեր հայրենիքը, այն հայրենիքը, որը հանդիսանում է մեր բոլորիս պատիր, անձնագիրը, մեր նախնիների երկիրը: Եկեղ կերտեմը մեր լուսաւոր ապագան: Հայրենիքից հեռու լինելով, երբէք երջանիկ կեանք չեմք ունենայ: Ինչքան էլ, որ մարդ մակերեսային երջանկութիւն ստեղծի, միեւնոյնն է, աշխարհի որ մասում էլ ուզում է լինել, նա իր սրտի խորքում կը գիտակցի, որ հայ է, եւ չի կարող անտարբեր մնալ Հայաստանի հանդէա: Հայաստանից ցանկացած դժբախտ մի լոր, մի պատահար նրա վրայ կազդի, յատկապէս երէ հեռու է երկրից, իսկ երը երկրում ես, եւ արհաւակիրքի կենտրոնում ես գտնում, ապա այդ դէպքում դրա հոգեկան ծանր ազդեցութիւնը քեզ վրայ չես կրի, իսկ երը հեռու ես լինում քեզ մեղալոր ես զգում:

Կը ցանկանայի շեշտել, որ միայն մեկ պարագայում կարող ենք այլ երկրում ապրել, եւ դա կը լինի այն ժամանակ, երը մեր պատճական հայրենիքին տէր կը դառնանք, հայրենիքը կը բարգաւաճի, թշնամիները կը չեզօքանան եւ, մի խօսրով հայրենիքին ոչ մի վտանգ չի ըսպաննայ, օրինակ ինչպէս ֆրանչիան է: Բայց մինչեւ այդ հայութեանը չեմ ապրելու այլ երկրում:

«. Զեր կարծիքը՝ իրանահայ մամուլի եւ մասնաւորապէս «Լոյս» երկշարաբարերի վերաբերեան:

Պ.- «Լոյս» երկշարաբարերը ես երկու անգամ եմ ձեռքս վերցրել, երը պարոն Լ. Ահարոնեանի գրասնեակն էի այցելել: Նա ինձ մի երկու խօսքով ծանօթացրեց թերթի նպատակներին, ապա ես անձանք ծանօթացաց թերթին եւ կարծիքս դրական է, յօդածներն բազմանոյք էին, մատչելի, միայն թէ այս պէտք է իր մէջ ներառի նաեւ սուր երգիծական յօդածներ: Ի միջիայոց ես կը կանչի, որ այն մարդիկ, որ համազգործակցում են տեղիս ամենածանօթ օրաբերքի՝ «Ալիք»-ի հետ, համազգործակցեն նաև «Լոյս» երկշարաբարերի հետ, եւ այս գործնիքացը փոխարած լինի:

«. Ո՞րն է Զեր այցելութեան նպատակը:

Պ.- Բացի իմ անձնական նպատակները՝ այստեղ եմ եկել մեկ առաքելութեամբ:

Հար. տեսմել էջ 23

## Հասարակական

### Յոյսով եմ մի օր այդ կոպիտ սխալի համար մեր ժողովրդից պաշտօնապէս ներողութիւն խնդրեն

#### Հարցագրոյց՝ իրանահայ ազգային- հասարակական գործիչ, բարերար՝ **Լեւոն Ահարոնեանի հետ**


Հ.- Պրմ. Ահարոնեան, Դուք մեր համայնքում սիր-ած եւ ճանաչած եք: Մեզ միշտ է հետաքրքրել և սիր-ած մարդու կենսագրութիւնը: Ո՞ր բականից եք գրադարակ-կան ազգային-հասարակական գործերով:

Պ.- Նախ շնորհակալու-քին եմ յայտնում ստեղծած առիրի եւ տրամադրած ժամանակի համար:

Գրագէտ ընտանիքի գաւակ եմ: Ծննդել եմ 1930 բականին, Սալմաստ գաւառի՝ Հաֆրան գիւղում: 1936-ին ընտանեօք փոխադրել ենք Թեհրան: Պատվանում եմ այն սերնին, որ հայոց դպրոցների փակման պատճառով զրկել է հայոց լեզու սոսվորելով հնարաւորութիւնից: Բարձրագոյն ուսումն աւարտել եմ «Հնարաւարայէ-ալի» ինստիտուտում՝ քիմիական ճարտարագիտութեան ճիւղում: Անուսանցած եմ եւ ունեմ լաւ կենացի ընկեր եւ երկու զաւակներ՝ մի աղջիկ, մի տղայ: Երկուսն էլ ստացել են բարձրագոյն կրթութիւն: Ունեմ նաև երկու քոռնիկներ:

Իմ ազգային գործերով զբաղելը կարելի է ասել մի պատեհութիւն եք: Ի.Ի. յեղափոխութիւնից հազի անցել եք մէկերկու ամիս, «Քէյհան» օրաթերում մի խիստ հակահայկական յօդած գրիեց եւ դրա հեղինակը համալսարանի դասախոս՝ դրկու. Բասրանին եք: Նա գրել եք, իբր թէ երկրորդ համաշխարհային պատերազմի սկզբնական շրջանում հայերը ծավալեփացներով կարմիր բանակին դիմաւորեցին կամ շեշտել եք, որ հայերն իրանից դրւու իրենցից չեն համարում եւ նմանատիպ անհերթեք արտայատութիւններ: Ժամանակը նպաստաւոր չէր եւ իմանակը միշտ, որ յեղափոխութիւններից յետոյ այդ պատեհ առիրը ստեղծուում է հաշիները մաքրելով շրջան: Այդ յօդածը կարող էր միտունաւոր լիներ եւ մեր հայերի համար վատ անդրադարձ ունենար:

Դժբախտաբար այն ժամանակայ մեր 100 հազարա-նոց համայնքի պատասխանատուններից որեւէ մէկը այդ յօդածին չպատասխանեց: Ես այլեւս չփնտացայ եւ երկու շարաթից յետոյ մի սուր եւ ըննադատական յօդածով պատասխանեցի եւ կարծու թէ մեր ժողովորդը սպասում էր դրան: Արդինքն 10-րդ Պատգամատրական ժողովի ընտրութեան ժամանակ ստացայ, որ ամենաբարձր ձայններով ընտրեցի պատգամատր եւ դրանից յետոյ էլ Թեհրան Խորհրդի անդամ, որն 6 տարի եւ երկու ամիս տեւեց:



Հ.- Պատգամատրական ժողովում (ՊԺ) հարցերը ինչպէ՞ս են քննարկել: Ինչպէ՞ս էր զնահատում նրանց ընթացքը: Արդիօք ճնշումներ ենք՞ են:

Պ.- Բարերախտաբար յեղափոխութիւնից յետոյ ժողովորդի եւ ազգային իշխանութեան մէջ շատ սերտ յարաբերութիւն եւ միասնականութիւն էր ստեղծուել: Բայց որոշ խմբակցութիւններ էլ կային, որ հակառակում էին ազգային իշխանութեանը, որ մենք դրանց կոչում էինք խափանարարներ եւ դրանց պատճառով պիտի մի քանի ճակատում պատրաստում էինք:

Բայց ինչ-որ առնչուում է 11-րդ ՊԺ-ին՝ պիտի ասեմ, որ ժողովների իմաստը մէկը միասին ճնշել չի նշանակում, ուստի որեւէ թեալրամբ տեղի չի ունենում: Ամսամներ պատահում էր, որ մի հարցի շուրջ ժամերով խօսում եւ շատ անգամներ վիճաբանութիւններ էին տեղի ունենում եւ նոյնիսկ պատգամատրների մէջ անախորժութիւն էր պատահում, բայց ի վերջոյ հարցը մի կերպ լուծում էր: Դա մի շատ ընդունած երեւոյք է: Օրակարգերն էլ մեծ մասամբ Թեմական Խորհրդի գործունեութեան կապակցութեամբ էին:

Հ.- Ժամանակին Դուք եղել եք Թեմական Խորհրդի ատենապետ եւ երկար տարիների պատգամատր: Ինչպիսի՞ գնահատական կը տայիր անցեալ 14 տարιայ ՊԺ-ի աշխատանքներին:

Պ.- Խկապէս 11-րդ ՊԺ-ի անդամներին պիտի անու-նել համբերատար եւ պարտաճանաչ, որովհետեւ 14 տա-րի առանց դժողորթեան աշխատել եւ իրենց ազգային պարտականութիւնը լին կերպով կատարել են:

Հ.- Որպ նք են եղել ՊԺ-ի բոյլ կողմերը:

Պ.- Այդ ժողովի միակ բոյլ կողմը մտարականների սակարագի լինեն է: Ժողովը պիտի տարբեր դասակարգերից, հասարակական եւ մշակութային շերտերից բաղկա ցած լինի: Թերութիւնը կանոնագրութեան մէջ է, որը չի համապատասխանում առօրենայ մէր ազգային պահանջներին եւ պիտի նորից ուսումնասիրի եւ քննարկի:

Հ.- Արդիօք բոյլ որոշումները խմբայի՞ն ճեւով են եղել: Հասածապաշտական նօսեցումները չե՞ն խան-գարել որոշումներ կայացնելու ժամանակ:

Պ.- Երէ մի հարց օրակարգի նիւթ է եղել, դա ուշադրութեամբ քննարկել եւ վաերացել է կամ էլ փոփոխութեան է ենթարկել: Որեւէ անհատական ճնշում սկսած՝ Սրբազն Առաջնորդից, որ ինքն էլ ամէն մի պատգամատր նաև ան ծայնի իրաւունք ունի, չի կատարում:

Հ.- Մեր համայնքին դեռ վերջնականապէս յայտնի չի դարձել թէ ի՞նչ եղան ՀՀ երկրաշարժի համար իրանահյութեան կողմից հաւաքած գումարները: Արդիօք ժառա-յեցին իրենց նպատակին թէ ոչ:

Պ.-Նախ պիտի ասէի, որ տարիներ շարունակ մասնակից լինելով ազգային կենաքին եւ անդամակցելով տարբեր խորհրդներում, բարձր յարգանք ունեմ տածելու ամէն մի ազգային գործչի նկատմամբ, որ իր բանկագին ժամանակը առանց որեւէ մի ակնկալիք նիրում է ազգային աշխատանքներին, նոյնպէս մեծ յարգանք ունեմ մեր ազգային դրածքի հանդէա:

## Հասարակական

Բնական է, աշխատանքի ընթացքում սխալներ են լինում եւ այդ պարագայում երէ կատարուած սխալը չքըն-նարկի եւ չբացատրի՝ ժողովրդի մօտ թերահաւատու-թիւնը կը զարգանայ, հետևեարար Ազգային Իշխանութեան եւ ժողովրդի մէջ ճեղքածք կառաջանա:

Հիմն հասնենք ձեր հարցի պատասխանին: Հետեւ-ելով մեր յարգելի պատգամատորների հետ ունեցած ձեր հարցազրոյցների շարանը, նկատելի է, որ լուրջ կերպով փնտրում էր կատարում, որպէսզի ճիշտ պատասխանի հասնել:

1988 թ. Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժից յետոյ աշխարհի ամբողջ երկրներից օգնութիւն էր հասնում Հայաստան: Իրանահայ համայնքն էլ ամէն կերպ իր աջակցութիւնը ցուցաբերեց եւ որեւէ օգնութիւն չխնայեց: Թեմական Խորհրդի կողմից ինձ նշանակեցին այդ հարցով օժանդակ յանձնախմբի պատասխանատու: Գիշեր ու ցերեկ ժողովուրդը դրամով եւ հազուստեղինով դիմում էր Առաջնորդարան եւ յանձնում իր նպաստները: Կարելի է ասել, Ենթայանձնախմբերը համարեա դրամ հաւաքելու դժարութիւն չունեցան եւ հաւաքած դրամի գումարը մեր ազգային կեանքում աննախընթաց էր: Մօտաւորապէս 70 միլիոն բուման իրանահայութեան օգնութիւնը եղաւ երկրաշարժի աղէտեալներին եւ այստեղից սկսկում է մեր ազգային կեանքի ամենասեւ կէտի գոյացումը: Թեմական Խորհրդն երբէ ոչ ժողովրդին ոչ էլ Պատգամատուական Ժողովովին, հաւաքած դրամների գումարը շայտարարեց եւ ինքը որոշեց հաւաքած դրամով մի ծորակաշինութեան գործարան կառուցել եւ այդ գործարանի տարեկան հասոյից օգնութիւն յատկացնել երկրաշարժից տուժած աղէտեալներին: (Այստեղ պարսկական ասացածքը պիտի յիշել. «Քողաք նամիո բահար միադ, բոնքոց վա խիար միադ» (հայերէն «Մինչեւ առուն ջոր գայ, գորտի աշքերը դրու կը գայ»): Այսպիսով կատարեցին մի մեծ սրխալ, առանց նկատի ունենալու, թէ ժողովուրդը դրամ է նիդել, որ իր հայրենակիցների համար մի քանի բնակարան, դպրոց, կամ բուժարան կառուցի: Ամրոդ աշխարհից թէ՝ հայ եւ թէ օտարներ գնացին Սպիտակ, Գիտիք, շինարարութիւններ կատարեցին: Բայց ցաւօք սրախ իրանահայերի դրամն, որ վերջին ՊԺ-ում 450 միլիոն բուման է գեկուցել (70-450 միլիոն տարբերութիւնը 1988-2000թ. դոլարի գմբ բարձրացման պատճառով է), կուտակել է սնդուկներում եւ յաւելեալ դրամ Թեմական Խորհրդն ամսական 1000 դոլարի շափ դրամն պահելու ծախս է վճարում:

Դա ուղղակի ժողովրդի գոյացումները անտեսել եւ անյարգել է նշանակում: Մարդիկ դրամը օգնութեան համար են վճարել, ոչ թէ գործարան կառուցելու նպատակով: Մանաւանդ, որ դրա որոշումը Թեմական Խորհրդի իրաւասութեան սահմաններում չի եղաւ եւ անպայման պէտք է ՊԺ-ը այդ հաստատէր: Երէ ժողովուրդը ծորակաշինութեան ծրագրից տեղեակ լիներ, այդ քանակով դրամ չէր հաւաքի: Սի խօսքով հաւաքած դրամը իր նպատակին չի ծառայել: Յոյսով եմ մի օր այդ սխալ կատարողները իրենց մեծահոգութեամբ այդ կոպահի սխալի համար մեր ժողովրդից պաշտօնապէս ներողութիւն խնդրել:

Հ.- Ճի՞շտ է, որ պր. Վ. Վարդանեանը 100.000 դոլար կանխիկ դրա՞ն է յանձնել Վազգեն Վեհափառին:

Պ.- Ես այսպիսի դրամի յանձնելուց բոլորովին լուր չունեմ: Երէ ուս կատարուած լիներ, պիտի ՊԺ-ում զեկուցւիր եւ այդ երբեք չի կատարել եւ չի խօսել այդ մասին: Հ.- Ուրիշ ի՞նչ նիդրահաւաք է եղել Հայաստանին օգ-նելու նպատակով:

Պ.- ՊԺ-ի առաջարկով Թեմական Խորհրդը 1993 թականին Հայաստանին օգնութիւն յատկացնելու համար իմ պատասխանատութեամբ մի շտապ օգնութեան յանձնախումը կեանքի կոչեց, որ 30 միլիոն բումանի շուրջ դրամ հաւաքից: Մի գնեց եւ այդ գնած մթերքների պահեատի կեանտրոնը Ձեյրուն բաղամասի Սուբերեան սրահն էր, որ կարմիր մահիկի օգնութեամբ տրամադրուած երկու C-130 օդանաներով եւ պր. Վ. Վարդանեանի համագործակցութեամբ փոխադրուեցին Հայաստան: Երբորդ օգնութեան պատասխանատուն պր. Նորայր Մելքոնեանը էր, որը 6 միլիոն բուման դրամ հաւաքեց եւ այդ դրամով սննդամբերը գնեց եւ Թեմական Խորհրդի անդամների միջոցով Սեղրի, Ազարակ եւ Զանգեզուր գաւառներում բաժանեց:

Հ.- Մի շաքր հարցերի շուրջ, օրինակ մեր կալածների, հարսութիւնների մասին չի խօսում մեր համայնքի ժողովրդի հետ: Արդեօք մեր բոլոր պատգամատորները քաջատեակ են այդ հարցերին, թէ ուս միայն որոշ անհատների սեփականութիւնն է եղել:

Պ.- Ազգային կալածները լաւ են սպահաւանել, կարող է ինչ-որ մի փոքր բնակարան առանց ՊԺ-ի բոլորութեամբ վաճառած լինի կամ մի բնակարան շտապ կերպով ցածր արժեքով ծախսած, բայց ի վերջոյ դրանք բոլորը եւ ՊԺ-ում վաերացւել են:

Հ.- Արդեօք արժանի կերպով կալածներից օգտագործում է թէ՞ ոչ:

Պ.- Մենք ունենք տարբեր տեսակի կալածներ, 1.- Հայարանակ քաղաքներում, օրինակ՝ Անգամի, Ռաշտ, Սարի, Ղազին եւ Մաշհադ, որոնք բնիկ հայերի կողմից, Թեմական Խորհրդի օգնութեամբ պաշտպանում են: 2.- Այն քաղաքներում, որ բոլորովին հայ չի բնակում, (Մերմանշահ, Համարան, Գորգան եւ այլն), դրանց՝ Թեմական Խորհրդը ՊԺ-ին ծախելու առաջարկ է տուել եւ ուս վաւերացւել: Կան մեծ եւ բանկարժեք եւ անվաճառնելի շենքեր, հողամասեր, եկեղեցների եւ դպրոցներ եւ շահարեկ կալածներ եւ կան փոքրիկ ու վատ վիճակում գտնուող բնակարաններ, որոնց պահելն շահաւէտ չէ: ՊԺ-ը վաւերացրեց դրանց վաճառքը այն պայմանով, որ ստացած դրամով մի ուրիշ շենք կառուցի, կամ որեւէ ազգանպատճարութիւնն եւրոպի:

Հ.- Ինչպէս են եղել ՊԺ-ի աշխատանքների քափանցիկութեան հարցը: Ինչքանո՞վ է ուս ազդում մեր ազգային-հասարակական հարցերի վրայ:

Պ.- Ինչպէս գիտէք ՊԺ-ը մեր ազգային դրամքների բարձրագոյն ատեանն է եւ Թեմական Խորհրդը էլ գործադիր մարմինը: Իմ կարծիքով 11-րդ ՊԺ-ն լաւագոյն եւ հնարատին շափով կատարել է իր առաքելութիւնը եւ վերջին երկու տարիներին բացառիկ կերպով աշխուժութիւն է ցուցաբերել:

ՊԺ-ի կողմից վաւերացւած որոշումներն են, որ Թեմական Խորհրդը գործադրում է եւ դրանք անկասկած ունեն իրենց ազդեցութիւնները, ազգային-հասարակական հարցերի վրայ:

**Ժար. տեսմել՝ էջ 17-ում**

## Գրական



ՄԵԾ բանաստեղծի  
յիշատակին

**Շայզալ**  
(Շայկ Գալստեան)

### ՀԱՅՐԵՆԻՔԸ

Հայրենիքը մայր է  
Եւ կենաց արդիք,  
Փրկութեան նա ժայռ է  
Ու սիրոյ համբոյր:

Նա սուրբ շարական է,  
Երանց է շոնի.  
Նա մեծ բուրաստան է՝  
Փոքրածու հողի:

Արեւի նա ծով է,  
Գոյների աշխարհ.  
Սարերի նա գով է  
Եւ սրտի տաճար:

Նա համակ ալիւն է,  
Եռանց է ու ջանք.  
Նա լոյսի մեծ սիւն է  
Գործ է, աշխատանք:

Պատմական կոքող է  
Նա ու նոր ուղի,  
Երջանկութեան փող է,  
Զերմութիւն տաղի:

Նա ոչ թէ դրախտ է,  
Դրախտներ չկան,  
Նա միակ մեր քախտն է-  
Օջախն է մեր տան:

### ՔՈ ՀԱՅԵԱՅՔԻ

Չո հայեացքի գեղեցկաթռով հերիարում,  
Ես ինչքան եմ խորասուզեւ կախարդաւ.  
Ինձ քում էր կեանքը զարուն յարածուն,  
Սշտաժայտ անուրջներով լուսամած:

Բայց մնացինք մենք անծանօթ եւ օտար  
Սի վայրկեան էլ գոնէ չնանք միասին.  
Դու իմ սրտի նրբանցքներով լուս անցար,  
Ես էլ միայն լուս խորիեցի քո մասին:

Կեանքի ամէն քայլափոխում կայ մի դաւ,  
Կեանքը յաճախ սառն է լինում անողոր,  
Ես չգիտն ինչու սէրը ջրացաւ,  
Սովոր կորած քոչունի պէս անորմոր:

Եւ իմ սրտի խորքում մնաց մի քախիծ,  
Մնաց կարծես բարդ, չուծած առեղծաւած...  
Չո հայեացքի ցորերի մէջ զինջ, անրիծ՝  
Կորաւ հոգիս կարօտակէջ ու խոնջած:

### ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱԾԻՆ

Սուրբ Էջմիածին, դու մեր գոյութեան  
Սիշնարերդ աճառ, հաւատքի-հաւատ,  
Սիրոյ մեծ պատգամ եւ խաղաղութեան  
Կաճաչ ձիթենի և կեանքի գաւաք:

Լոյսի եւ յոյսի անմար ծխածան  
Եւ եռայրութեան դարրնոց մեկին,  
Դու Վերելքների անձնուրաց կածան  
Դու Երկնային ցոլք, սուրբ Էջմիածին:

Դու գեղեցկութեան վարդաշաղ արեւ  
Դարերից եւած գեղակերտ կորող:  
Վեհութեան մէջ կայ սրբութեան պարզեւ  
Եւ կայ մարդկային հոգի լուսաշող:

Չո հաւատքի մէջ դարերն են մուծել  
Եւ սերմներն են քայլել անվարան  
Սուրբ խաչն է մարդկանց սրտերում երկնել  
Սինչեւ Աստծոյ գահ յղկել է ճամբան:

Արդար կրծքի տակ կայ գութ եւ Ասուած,  
Վեհ գործում հաւատ կայ համասկիւտ,  
Առանց հաւատի Յիսուսը խաչած,  
Չեր կարող յարենի սրտերի մէջ բիւր:

Դու մեծ հաւատք՝ հաւատ ու խորան,  
Դու անձեռակերտ քայլի Երկնային,  
Տաճար լուսակերտ եւ ազգապահպան,  
Դու խիղճ մարդկային, սուրբ Էջմիածին:

### ԿԵՆՍԱՇՈՂ ԿԵՐՈՆՆԵՐ

Կերոններով կենսաշող,  
Ես դուրս եկայ լայն աշխարհ,  
Սրտում յոյզի դող ու ցող  
Եւ անմահանջ ճանապարհ:

Յանուն անմար գալիքի,  
Յանուն երգի խննազին,  
Կերոնները զարթօնքի  
Վառ եմ պահում իմ ճետքին:

Ազատատենչ քայլերզով,  
Ժողովրդից անբաժան,  
Լիցքատրւեց լուսաթռով  
Երանգներով նոր կածան:

Եսս ընդմիշտ զօղեցի  
Մեծ, ընդհանուր երթերին,  
Էլ ինչ ունեմ ես բացի  
Ժողովրդից քանկազին:

## Մշակոյք

# Մեր արևեստագէտները

### Վայիկ Կարդանեամ

Այս անգամ մեր զրուցակիցն էր իրանահայ հանրայայտ բեմադրիչ-դերասան՝ Սուլեն Մնացականեանը: Մի հրաշալի, անձնուրաց եւ նւիրեալ հայ, որն իր ամբողջ կեանքը անվերապահ նւիրեց հայ արևստին եւ մշակոյթին՝ առանց որեւէ ակնկալիքի:

Ս.Մնացականեանը համեստուքամ տիպար է, անզուգական մարդ: Ընտանիքը նրա համար սրբութիւն է: Դպարտութեամբ է արտայայտուում իր ընտանիքի մասին: Դարց եմ տալիս նրան,- Արդեօք թատերական աշխատանքը չի՝ խոչընդոտուում Ձեր ընտանեկան յարաբերութիւնները: Անմիջապէս հասկանում է հարցիս Էութիւնը եւ յստակորեն պատասխանում . - Ամենեւին, ես այդ հարցով թերեւս ամենաերջանիկ մարդը լինեմ, ես իմ կեանքում ոչ միայն նման դժւարութիւն չեմ ունեցել, այլ ընդհակառակը այդ առումով եւս իմ յաջողութիւնների համար պարտական եմ ընտանիքիս:

Ս. Մնացականեանը 56 տարի ծառայել է հայ թատրոնին, բեմադրել՝ 50 անուն թատերգութիւններ եւ ներկայացել է 40 դերերում որպէս դերասան:

Վարդք կատար, արևեստի անխոնց մշակ, վաստակաշատ եւ համեստափայլ հայ թատրոնի՝ մեծ վարպետ:

### Հարցագրոյց՝ Սուլեն Մնացականեանի հետ



Հ.- Թէալտ Դուք ճանաչած էք մեր համայնքում, մասնաւրապէս արևեստագէտ-արևեստակերների համար, այնուամենային խնդրում եմ ներկայանալ:

Պ.- Ես ծննել եմ 1932 թականին Թարիքում: Առաջին իմ թատերական փորձը եղել է մանկապարտէզում՝ 6 տարեկանում:

Դրանից յետոյ աշխատանքի եմ անցել, որովհետեւ հայկական դպրոցները այդ ժամանակ փակած էին: Պատերազմից յետոյ էր, որ սկսեցին հայկական դպրոցները շատ ու թիւ Խորհրդական բացուածութիւն ամբողջ հայ աշակերտուքեանը: Ես այդ ժամանակ պարսկական դպրոց էի զնում: Հայկ Ածեմեանի մօու, որ յայտնի բանաստեղծ էր, մասնաւոր հայերէն էի սովորում: Ամեն օր մինչեւ ժամը 16-ը պարսկական դպրոց էինք յաճախում, 16-18-ը՝ հայերէն դասի և 18-ից յետոյ՝ Ռուսերէն:

Հ.- Այն ժամանակ հայոց լեզի դասաւանդելը արգիւած էք:

Պ.- Ոչ, այն նոր էր բացւել, երբ Կարմիր Բանակը մտաւ Թարիք: Այն շրջանում, որ ես արդէն սկսեցի դպրոց զնալ, պատերազմից յետոյ էր: 1941 թականին Ռուսական բանակը մտաւ և գրաւեց Թարիքը: Այն ժամանակ նոյնիսկ մահազդները պարսկերէն լեզուվ էին տպագրուում: Լաւ յիշում եմ, Թովմաս Առաքելեանի մահազդն էր, որ առաջին անգամ տպագրուեց հայերէնույ: Իսկ վերջին պարսկերէն մահազդը՝ Աննա Բարյեանին էր: Բարյեանը յայտնի դերասաններից էր, որ մահացաւ երիտասարդ տարիքում: Իմ դերասանական ընդունակութիւնն առաջին անգամ յայտնաբերեց պրու: Ամենանի միջոցով (ի դէպ նա հրաշալի տաղանդ ուներ ընդունակութիւններ յայտնաբերելու գործում):

Ուետք է ընդգծեմ, որ մենք այն ժամանակ «Վարդանանք»-ի տօնավատարութիւնը «Ապրիլ 24»-ի ոգեկոշման արարողութիւնը կատարում էինք տներում, քանի որ քոյլութը տրիւթիւն չկար:

միութիւնը իիմնեաց 1944 թականին ( դա նախքան Թէհրանի «Արարատ» միութեան հիմնադրումն էր): Դա առաջին հայկական միութիւնն էր: Ես 22-րդ անդամն էի, որ անդամագրուեցի, իսկ աղջիկներից առաջինը եղաւ, որը 10 տարի մեծ էր ինձանից: Արշալոյս Սելիք Բաղդասարեանը մեր յայտնի դերասաններից էր: Նրա 4 քոյլերը եւս դերասաններ էին: Նրանցից մէկի՝ տիկին Արշալոյսի դուստրը՝ Լիլիկ Յովհաննիստանը (այժմ՝ Հայաստանի կինոյի յայտնի դերասաններից), մի օր կանչեց ինձ եւ ասաց թէ՝ մայրն ինձ հետ գործ ունի: Այդ ժամանակ 12 տարեկան էի: Վազելով զնացի նրա մօու: Նա ասաց, - Դերձակի աշակերտի դեր ափսի խաղաս: Այդ «չարածճի» աշակերտի դերը յանձնեց ինձ: Այդտեղից էլ հիմքը դրւեց իմ թատերական կեանքի:

3-4 տարի շարունակեաց, մինչեւ 1948 թականը: Դրանից յետոյ չփիտեմ ինչո՞ւ տիկին Արշալոյսը բացակայեց: Սինոն Սարգսեանը շարունակեց նրա գործը: Նա էլ քանի տարի յետոյ քոյլեց Թարիք քաղաքը: Այսուհետեւ Բարգէն Ամենեանը շարունակեց նրանց գործը: Այդպէս նրանց էլ յաջորդեցին ուրիշներ:

Իսկ 1948 թականին այդ միութեան թատերախումբը մնաց առանց դեկավար: Ես այդ ժամանակ ընդդէնը 16 տարեկան էի: Ինձ առաջարկեցին ստանձնել բեմադրիչի պարտականութիւնները: Այդ թականին էր, որ ես իմ առաջին բեմադրութիւնը կատարեցի:

Հ.- Ի՞նչ ային էր դա:

Պ.-«Երկուբարացներ»: 1948 թականին էր՝ Իրանի թագավորութեարքի էին ներարկել: Նրա ապարինման առիթով մի մեծ հանդէս կազմակերպւեց «Արամեան» սրահում: Այդ հանդէսին մաս էր կազմում մեր բեմադրութիւնը:

Հ.- Այդ սրահն որտե՞ղ էր գտնում:

Պ.- «Թարլով» գիտի եկեղեցու բակում էր գտնուում: 100 տարայ անցեալ ուներ այդ սրահը: 1948 թականին Բարգէն Ուորչեանի ջանքերով 12 հազար բուման ներդրում կատարեցին, եւ այդ սրահն նորոգեցին: Հրաշալի սրահը օրեակներով եւ բոլոր յարմարութիւններով:

Մինչեւ 1950 թականը, ես բեմադրեցի 10 պիտեսներ, որոնցից յետոյ փակից միութիւնը: Դրանից յետոյ ընտանեօք փոխադրուեցին Թէհրան:

«Բարեգործական» միութեան միջոցով վարձեցի Հաշրգերի մօտավայրում գտնուու «Ալիգուլար» գիտուու որպէս ուսուցիչ: Այդտեղ 2 տարի դասաւանդելուց յետոյ առաջին փորձերը կատարեցին մանկական թատերախումք իիմնելու համար: Բայց շուտով գիտի բնակիչները

## Մշակոյք

Թեհրան տեղափոխւեցին: Այդտեղ էլ 2-3 բեմադրութիւններ կատարեցի: Ես էլ ստիպած փոխադրեցի Թեհրան և դարձայ «Քարեգործական» միութեան երիտասարդական բաժնի անդամ: Այդտեղ հիմնեցինք մի թատերախումբ:

«Յակորս աղա» անունվարենտահայերէնով մի պիես բեմադրեցին նոյն միութեան մէջ: Յայօք սրտի այն ժամանակ չկար որեւէ աֆիշ կամ յայտագիր, ոչինչ չունեինք, ոչինչ իշխում եմ, բայց ցայօք որեւէ տեղ գրանցուած չէ:



Այնուհետեւ մասնակցեցի «Արարատ» միութեան ձեռնարկներին (1960-ական թթ. Թեհրանում միայն «Արարատ» միութիւնը թատերախումբ ուներ): 30 տարի աշխատել եմ սյն միութեան մէջ՝ ոչ շարունակարար:

1960-1980 թթ., եղել են իմ աշխատանքի տարիները: Այդ տարիներում միանաւագ աշխատել եմ «Արարատ» միութեան թատերական բաժնում՝ որպէս դերասան:

1969 թականին միութեան վերջին բեմադրիչ՝ երջանկայիշատակ Ն. Սարարեանի մահից յետոյ «Արարատ» միութիւնը խճողնան ենթարկեց: Հապա ի՞նչ պէտք է անեինք: Միութեան վարչութեան կողմից այդ հարցով ինձ հրահրեցին ժողովի: Ես առաջարկեցի կազմել երիտասարդական մի նոր թատերախումբ: Կազմեցի եւ սկսեցի աշխատել, որում ունեցայ նաև յաջողորդիւններ:

Այդ ընթացքը շարունակեց մինչև 1974 թականը: Այդ ժամանակ Արամայիս Աղամալեանը դարձաւ միութեան թատերախումբի բեմադրիչը: Իմ խումքը քայլայման ենթարկեց: Խնձրի դերասանները գերազանցին ներկայանալ նրա խմբում: Ես էլ մասնակցեցի նոյն խմբի փորձերին եւ սկսեցի աշխատել որպէս դերասան: Այդ շարունակեց մինչև 1980-ական թթ.: Դրանից յետոյ խնդիրներ ծագեց իմ եւ Աղամալեանի միջեւ եւ այդ բոլոր պատճառ դարձան, որ ես բողնում «Արարատ» միութիւնը եւ աշխատանք շարունակեմ «Միփան» միութեան մէջ: 12 տարիներ շարունակ աշխատել եմ «Միփան» միութեան մէջ:

1979 թականից յետոյ «Ժողովրդական Թատրոն» հիմնեց եւ ինձ էլ հանգուցեալ Արմանը հրահրեց համագործակցութեան:

«Ժողովրդական Թատրոն»-ն իր աշխատանքը սկսեց 1979 թականին «Գիրոր»-ով: Իրանահայ թատրոնի պատմութեան մէջ երկու պիեսներ ենք ունեցել, որ ամենաշատ բեմադրութիւնն են ունեցել: Մէկը՝ «Գիրոր»-ն էր, որ 45 անգամ բեմադրեցինք, միաը «Ուշ լինի, ուշ լինի»-ն էր, որ ես բեմադրեցի 52 անգամ:

Յայօք այդ «Ժողովրդական Թատրոն»-ն էլ շատ երկար կեանք չունեցաւ:

Արտադասրանային աշխատանքներ եմ ունեցել, 50 ից աւել երիգներ ենք ծայնագրել:

Տիկ. Այդան շատ հոգատար էր այս աշխատանքի մէջ: Իր բնակարանը վերածել էր փոքր ստուդիոյի եւ բոլոր ձայնագրութիւնները կատարում էինք այնտեղ:

Մանկական բեմադրութիւններ եմ ունեցել «Միփան» միութիւնում, որոնցից կարելի է յիշել «Չունն ու կատուն» :

Կեանք անցել է աշխատանքներով: Բայց միայն մի քանից եմ ցատում, որ ոչ ոք, ոչ մի կազմակերպութիւն եւ ոչ մի միութիւն այս վերջին աշխատանքը՝ «Կարապի երգը», չի արժենորդել: Շատ հիանալի աշխատանք եմ բոլորից, բոլոր միութիւններից եւ նաև համայնքից:

Այդ թատերագրութիւնն իմ առաջին գործը չէր, որ անյայտ լինէր բեմադրիչը: Զգիտեմ, թէ մեր ժողովուրդը ի՞նչ է ուզում բեմադրութիւնից:

**Հ.- Ինչպէս եղաւ, որ մտար թատրոնի ասպարէզ: Ըստիամբայալս իմշալ՝ էք գնահատում թատրոնի արժեքը համեմատելով միւս արևոտների ենս:**

Պ.- Թատրոնը համարում արեւածար եմ, բոլոր արեստներից անենակատարեալ, որպիշեւու թատրոնի մէջ ամէն ինչ կայ: Եթէ միայն երաժշտ լինես՝ միայն երաժշտութիւնից գաղափար կունենա: Ես նոյնին անցեալում մեր երգաշխմբի ղեկավարներին ասում էի,- Զեր երգիչները լաւ ձայն ունեն, բայց լաւ չեն կատարում: Ոչ մի զգացմունք չեն արտայայտում: Եթզի լնրացքում երգիշը պէտք է կարողանայ իր ապրումները փոխանցել ժողովուրդին: Թատրոնը արձանագրութեան, նկարչութեան եւ այլ արեստների հաւաքածուն է:

**Հ.- Արդի՞օք չէք գտնում, ժամանակը հասել է, որ թատրոնով զբաղվող նարդուն պէտք է անպայման վարձադրել:**

Պ.- Ինչու չէ: Ես 56 տարի է, որ թատրոնի ասպարէզում եմ: Միայն 6 տարի է, որ վարձատրուերում եմ: 50 տարին լրի անվճար եմ աշխատել, եւ կարծում եմ, որ պարտք կատարել եմ ժողովրդիս:

«Զարմահայ» միութիւնում աշխատանքս սկսեցի «Աշխարհն շուտ է եկել» պիեսի բեմադրութիւնով: Ես հրաժարեցի իմ 50 տոկոս ստանավիրից, առաջարկեցի այդ թաժանել ղերասանների մէջ եւ խնդրեցի մի գումար էլ միութիւնը յատկացնի նրանց, որպէսի մի շօշափելի գումար ստացի: Զնդունեցին, ասացին, - Սենք ոչ մի գումար չենք տայ ղերասաններին:

**Հ.- Եթէ համոզած էք, որ այսօր իրանահայ թատրոնը անմիջիքար վիճակում է, ապա այդ անցանկալի դրութիւնից դրւու բերելու համար ի՞նչ առաջարկ ունե՞ք:**

Պ.- Ես առաջարկում եմ իհմնել մի ընդհանուր «Ժողովրդական Թատրոն», որին իրենց մասնակցութիւնն պիտի բերեն իրանահայ բոլոր թատերական գործիչները: Ինչպէս ասացի նման մի փորձ անցեալում ունեցել ենք, եւ իհմնել է հայ «Ժողովրդական Թատրոնը», սակայն ցայօք ինչ-ինչ պատճառներում լուծարվել: Մեր այսօրայ թատրոնի փրկութեան ելքը միայն այդ առաջարկի իրկանացումը կը լինի:

**Հ.- Ի՞նչ կատք մեր օրերում լնրացը արտագաղթի մասին:**

Պ.- Դա իրօք ցաւալի երևոյթ է: Կար մի ժամանակ, որ ազգովի երազում էինք այս օրը, որ պէտք է տեսնեինք Հայաստանի անկախութիւնը: Եկաւ այդ բարերաստիկ օրը: Սպասում էր ալիսի ազգովին հաւարենը մեր պահենական հողի վրայ: Աւաղ այդպէս չեղաւ: Հայի թշնամին իր կամքը թելադրեն: Արեմուտքը իր գիրկը բացեց մինչ այժմը «ոչ հանդորժելի հայի» համար: Միանգամից մենք դարձանք նրանց «աշքի լոյսը»: Այսօր նման ցաւալի կորուստ է տալիս նաև մեր զաղութը: 600 տարայ պատմութիւն ունեցող գաղթօջախը մի օրում քանդել են ցանկանում: Չանի ոչ չէ, պէտք է սրափիւլ: ■

## Ստացւած գրքեր Եւ նամակներ



### Ստացւած գրքեր

Դալէպահայ նշանաւոր մտաւորական, գրող բժիշկ՝ Թորոս Թորանեանից ստացել ենք իր հեղինակած գրքերից 25 հատորներ: Ոյժ Եւ կորու նրան: Ընորհակալութեամբ, ներկայացնում ենք այդ գրքերը.

1. «Յոյսի Կարաւան», Միփան Շիրազ, Բէյրութ 1988թ., 64 էջ:
2. «Անտարուգեան երգեր» (բանաստեղծութիւններ), Հալէպ 1979թ., 70 էջ:
3. «Գիրք Որդիական», «Քազմադարեան Հայստան վարսուն տարեկան», Հալէպ, Բէյրութ, 1980թ., 333 էջ:
4. «Փայտ գդալին Պատմութիւնը», Բէյրութ, 1984թ. 96 էջ:
5. «Սուրբահայութիւնը Եւ Հայաստանի երկրաշար-Ժը», Բէյրութ 1990թ. 103 էջ:
6. «Թրքական համարուսանկանութիւնը վարագոյ-ըսկ չի ծածկվիր», Բէյրութ, 1990թ., 164 էջ:
7. «Ապրու մարդեր», Բէյրութ, 1991թ., 200 էջ:
8. «Մքութիւն Արեւի տակ» (խոհագործիւն) Հալէպ, 1994թ., 104 էջ:
9. «Երկրն հեռու, երկրն հետ» (բանաստեղծութիւններ) Բէյրութ, 1994թ., 144 էջ:
10. «Գրող հոգիորականը» (Արտ. Արք. Սանուկեանի կեանք ու զործունութիւնը), Հալէպ, 1994թ., 192 էջ:
11. «Հայկական հարցը, երկու մօտեցում», Հալէպ, 1994թ., 80 էջ:
12. «Ծնչել ապրիլ Կոմիտասով» Հրանդ Գերգետան, խմբագրեց՝ Թ. Թորանեան, Հալէպ, 1993թ., 240 էջ:
13. «Ջննու, Հայաստան», Բէյրութ, 1996թ., 94 էջ:
14. «Երիզ մը կապոյտ», Ա. Երեւան 1995, 132 էջ:
15. «Երիզ մը կապոյտ», Բ. 1995, 98 էջ:
16. «Երիզ մը կապոյտ», Գ. 1995, 54 էջ:
17. «Մարդերգակ բանաստեղծը» Գալրւստ Խանենց, Հալէպ, 1995, 154 էջ:
18. «Բրանհայ ոգիշունչ բանաստեղծը» Վարանը, Հալէպ 1997, 190 էջ:
19. «Յուշեր անկրկնելի Շիրազէն», Հալէպ, 1997թ., 80 էջ:
20. «Թող Հայաստանը խօսի», Հալէպ, 1998 թ., 184 էջ:
21. «Արմաւտ բանաստեղծը», Կամադա, 1998թ., 142 էջ:
22. «100-ամեայ ապրող բանաստեղծ» Ալէք Գլըճեան, Հալէպ, 1994թ., 80 էջ:
23. «Կեանքի կանանենքով», Հալէպ, 1999թ., 116 էջ:
24. «Darkness under the sun», Բոստոն 1999թ., Հալէպ 1999թ., 70 էջ:
25. «Սկիմոքի տասնանեակները», Ա. Ծառուկեան, խմբագրեց՝ Թ. Թորանեան, Հալէպ 2000թ., 174 էջ:

Ընորհակալութեամբ Թեհրանի «Նայիրի» հրատարակչութիւնից ստացել ենք ներքոնշեալ գրքերը.

1- «Ուղեւորութիւն դէպի Հայաստան» (Զրոյց պատմութեան հետ), Արտակ Արք. Մանուկեան, Թեհրան 2000թ., 216 էջ:

2- Պ. Մետակի «Հատընտիր», Թեհրան 1999թ., 335 էջ:

3- «Բն սիրում այզին» (Մանկական բանաստեղծութիւններ), Թեհրան 2000թ., 31 էջ:

4- «Խճճած ժամանակի բաղաքը», Ալլա Տէր Յակոբեան, Թեհրան 1999թ., 24 էջ:

5- «Կարօս» (բանաստեղծութիւններ), Նորավան (Գայեան Արգարեան), Թեհրան 2000թ., 57 էջ:

6- «The Armenian Church Feasts», Արտակ Արք. Մանուկեան, Թեհրան 2000թ., 109 էջ:

7- «Սիրուծ երգեր», կազմեց՝ Ս. Ամիրխանեանը, Թեհրան 1999թ., 215 էջ:

8- «Ուղղագրական բառագրոյլ», կազմեց՝ Վ. Սարուխանեանը, Թեհրան 1999թ., 173 էջ:



### Նամականի

«Լոյս» երկշարաբարերի Եւ  
«Ապագայ» ամսագրի պատուարժան խմբագրի  
Թեհրան

Հաճոյքով կը նշենք, որ ստացած ենք «Լոյս»-ի Եւ  
«Ապագայ»-ի համարները:

Սրտանց կը շնորհաւորենք այս ազգօգուտ ձեռնարկ-ները Եւ կը մարդենք ամենայն յաջողութիւն:

Սիրով՝  
Պրոֆ. Բ. Լ. Զեքեան  
Պօ-Արաքս մշակութային  
ընկերութիւն-Վենետիկ  
Վենետիկի համալսարան  
19.08.2000



### ՈՍԿԵ ՕՂԱԿՆԵՐ

**ԼՈՅՍ** երկշարաբարերը զերմօրէն  
շնորհաւորում է նոր ամուսնացած սիրելի զոյգերին:

Այիհա Աւանեսեան – Ռազմիկ Աբեղ  
Ժաքին Իսմայիլեան – Ժողված Արրահամեան  
Ժենիկ Եղիայեան – Ռայմոնդ Յովիաննիսեան  
Ուրիխան Յովիաննիսեան – Սուրիկ  
Խորայելեան  
Աղրիմի Ազարեան – Ջամլետ Յովսէփեան  
Խւետ Ջայրապետեան – Մերժիկ Խսախանեան

## Հասարակական

## **Եջ 12-ի շարունակութիւնը**

Հ.- Ի՞նչ խորհուրդներ կը տայիք մեր ապագայ 12-րդ ՊԺ-ի նորընտիր պատգամատրներին:

**Պ.** Երբեմ մեր ազգային կենաքին լաւատեղեակ անձ,  
կառաջարկէի, որ առաջին հերթին մեր կանոնագրութիւնը  
լիի կերպով Վերստին քննարկի, որովհետեւ ներկայ կա-  
նոնագիրը չի համապատասխանում մեր ազգային առօրեա  
պահանջներին:Այլևս Թեմական Խորհուրդները մկրտու-  
թեան, ամուսնութեան և քաղաքան արարողութիւններից գո-  
յացած դրաններով չեն կարող Առաջնորդարանի ահետիվ  
ծախսերը հոգալ եւ պէտք է մի գործունեայ ՊԺ, որ մէկ առ  
մէկ կինդիրները քննարկի, եւ համապատասխան որոշումներ  
կայացնի: Դրանց հասնելու համար մեր համայնքի նարդիկ, որ  
ժողովներին մասնակցելու կարողութիւն եւ հարկ եղած  
գիտելիքները ունեն՝ պիտի մասնակցեն ընտրութիւններին: Այդ  
գիտակցութեամբ, նրանք իրերի հայ՝ համայնքում կը կա-  
տարեն իրենց ազգային պարտականութիւնները: Իսկ ընտ-  
րովներն եւ թէարկութեան մասնակցելով կը կատարեն ի-  
րենց ազգային պարտականութիւնները:

Հ.- Խնդրում ենք որոշ տեղեկարժիւներ տալ Ահարոն-եան մանկապարտէզի և Երևանի թի 136 դպրոցի վերա-նորոգման աշխատանքների մասին:

**Պ.** 1993 թավանին ծնողներին յիշտալին կսուցեցի Ա. Ա. Ահարոնեան մանկապարտը զի յանձնեցի ազգային հշխանութեանը: Մենք շատ բարարաւած ենք դրանով, որ Ձերուն բաղանափ 350 մանուկներ տվորում են այդ մանկապարտեզմ:

Հայաստանում անձնապէս ներդրումներ չեմ կատարել, բայց «Սաքի» ընկերութիւնը, որ ես եւ կին էլ նրա բաժնատերերից ենք՝ հաստատել է իր մասնաճիշտի գրասենեակը Երեամում, որը եւ փախադրական եւ գրասաշրջիկութեան աշխատանքներով է զբաղւում, ու ուրախ ենք, որ կարողացել ենք 10-ից ավելի աշխատանքներ աշխատանքն ասակիում:

Անցեալ տարիայ Վերջին ամսներին Երեւանի «ԶԵՐՈՒՆ» թաղամասում 136-րդ դպրոցի հրդեհի բերումով վառեց: Կննչական հետ որդութեանը այդ այրած շենքը Վերանորոգել, որի աշխատավոր ուժեամբ մնել է:

Հ. - Ինչպէ՞ս էք տեսնում միասնականութեան երեւոյքը իշխանական մօս և ի՞նչ ցուցմունքներ կարող էք տալ այդ ուսուռքնեան:

**Պ-.** Սիանականութիւնը մեր համայնքում՝ այսօր այս կենսական պահանջներից է, որ պիտի իրագործի և դա մի անհրաժեշտութիւն է: Բայց կան որոշ խնդիրներ, որ խանճարում են այդ ուղղութեամբ կատարող աշխատանքներին: Հնուց մնացած զաղափարախօսութիւնների տերերը, որ երբեք չեն ուզում աշխարհի փոփոխութիւնները եւ իրենց իրական վիճակն ընդունել: Դա նմանում է այն ճապոնացի զինուորին, որ երկրորդ պատերազմի աւարտից 20 տարի յէտոյ Ֆիլիպինի անտառներում խրանատներն եր պաշտպանում եւ որսի աշխարհից տու տունել:

Սիստեմատիկ լոր շնուռքը:

Սիստեմատիկ առկա է մի այլ գաղափարախօսութիւն, որ ամեն բնապատճում իրեն ժողովրդի կնքահայրն է համարում, իր առաքելութիւնը չի կատարում եւ նորից ցանկանում է տարածութիւն պահել իր եւ որիշ այլախոհների հետ, սակայն այդ հարցը մի քանի օրուն կամ ամիսներում չի հարթի: Պիտի միշտ միանանականութեան քարոզութիւն տարի, որը եւ հասոց ուժնաման կո նաևասի:

Պահի ընդունել, որ 21-րդ դարում աշխարհի ժողովուրդը գիտ է դեպի ժողովագարութեան համակարգի, ընդ որում խօսք ժողովրդին է եւ այն ժամանակ միայն կը ստեղծի հոսքամ միասնականութեան: ■

## **Եջ 2-ի շարունակութիւնը**

Որպեսզի 12-րդ Պատգամաւորական Ժողովի ընտրութիւնները ազատ, անշահկան, արդարացի տեղի ունենան, եւ դժոնկրատիկ պայմաններին համընկնելով՝ համայնքը աշխոյժ մասմակցութիւն բերի այդ ընտրութիւններին, հարկաւոր է.



5. Գագել 12-րդ՝ ուժ-ը ընտրութեան հասարդող մարմին (ծրագիր, քեկնացու, ընտրապայքար) ազգային մարմինների ծրագիր եւ աշխատանքը հանդիել, հասարակութեան եւ պետական մարմինների հետ կապ պահել:

Համարդող մարմինը հետևեալ գործընթացը կարող է կիրառել, տարբեր տեսակէտների տէր անհատների հետ հարթակեալ:

ա- Դեմոկրատիկ պայմանների երաշխիք ստեղծել բնուրության համար:

**բ-Թէկնածուներին տեղեկութիւն եւ ուղղութիւն տալ**

հասայնքի ազգային-հասարակական հարցերի շորթը:  
զ-Հանդիպումների միջոցով գեկուցել հասարակութեանը եւ բացատրական աշխատանք տանել:

դ- Կապ պահել եւ խորիրդակցել պետական եւ ազգային մարմինների հետ:

Ե-ՀԱՄԱՅՆՔԻ ազգային, կրօնական, կրթական, մշ-  
շակութային եւ հասարակական հարցերի շուրջ տեղե-

կութիս հաւաքել, ուստինասիրել եւ ծրագիր առաջարկել։  
զ- Ազգային նարմնաների ծրագիրը, զործունեութիւնը ընճարկել եւ հսկել որպէսզի տարրեր խաւեր եւ տարրեր տեսակիտների տէր անհատներ ներգրաւեն համայնքի ազգային-հասարակական աշխատանքներին և եղենց ասպասականարու օօամ։

Ե- Ուսումնասիրել, որ տյի զործընթացի զործադրման համար ի՞նչ դժվարութիւններ, արգելքներ կան անհատական-խմբային շահեր, նեղմիտմենատիրական մօտեցուններ, իրատես-տրամաբանող անհատների բացակայութիւն, ազգային-դենուկրատ անհատների մէկուսազուր եւ այլն:

ը-Հանդործող, համերաշխ, համազրծակցական  
և միասնական ուղղութեան առաջարկներ եւ գործու-  
նեութեան երաշխիքներ են հարկաւոր, որպէսզի հնա-  
րաւոր լինի դեմոկրատիկ պայմանների ներքոյ ընտրա-  
պայքարի ծրագիր առաջարկել, թեկնածուներ ներկա-  
ւագնեն եւ ունարութիւն կատարեն:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

(Պատմական ակնարկ)

Չորրորդ համագումարը ընտրեց Կենտգործկոմի կազմը (90 անդամ և 43 թեկնածու) և Անդրդաշնորհական խորհուրդների համագումարի պատվիրակներին (101 մարդ):

